


Հրատարակութիւն Եօրէիանական Յանձնաժողովի

ՔԱՆՆԵՒՆԳԵԱՄԵԼԿ



Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ի Ի

(1883 XXV 1908)

43

Ա Ղ Բ Ի Ի Ր

ժանկական ամսագրի

25 - Ա Մ Ե Ա Կ

(1883—1908)

I.

Տիգրան Նազարեան

II.

ԱՂԲԻԻՐԸ 25 ՏԱՐՈՒՄ

Կ ա զ մ ե ց

Մ. Յ.

Բժշկապետ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

առաջարկանով

Ե Ի

Ա. Մ. ՆՉԵԿԵԱՆԻ

Երդու ամսով

ԲԵՎՈՒՅՈՒՆԵՐԻ ԲԱՆԳԱՐԱՆ
ԱՐՄ.ՍՕՄ
Музей Революции
№ ԹԻՖԼԻՍ

Ելքորոշարժ տղ. Ա. Մ. Թառումեանց. Բարոնսկայա փ. № 2.

1908



M. Cur

11089-3936 4177
MUSEUM OF THE
MUSEUM OF THE

MUSEUM OF THE
MUSEUM OF THE



U O U Q U R U S

իր յի գամարդ ցի անայն արտոյն
... արտոյն անայն արտոյն
... արտոյն անայն արտոյն
... արտոյն անայն արտոյն
... արտոյն անայն արտոյն

Աթէ տայինք հասարակութեանը սոսկ չոր
ու ցամաք պաշտօնական խիստ հակիրճ տեղե-
կութիւն Աղբիւր մանկական ամսագրի հրատա-
րակութեան մասին յընթացս քսան և հինգ եր-
կար տարիների, ընթերցողը արդէն իսկ կը
զգար, թէ Աղբիւրի խմբագիր Տիգրան Նազա-
րեանը որքան օրինակելի եռանդ և անյողողող
կամք է գործ զրել իր մի անգամ ընդունած
բեռը պատուով տանելու համար:

Եթէ աչքի անցնենք այն անունները, որոնք
իրենց մտքի պտուղներն են նուիրել Աղբիւ-
րին, կը տեսնենք, որ ժամանակի ականաւոր
գրիչները—մանկավարժական, դաստիարակչա-
կան, վիպասանական, բանաստեղծական—բոլորն
էլ իրենց լումաները բերել են յորդառատ
դարձնելու Աղբիւրը:

Եթէ աւելացնենք և այն, որ, բացի Աղբիւ-
րից, նոյն Տիգրան Նազարեան հրատարակել է
18 տարի և Տարագ և Առողջապահական և
АНОНСЪ և Փարիզի մոզանեք և էլի չգիտեմ ինչ
ու ինչ, և այդ բոլորը նա ինքը միայնակ,—մենք

անպատճառ բարի նախանձ կը զգանք զէպի-
այգպիսի մի եռանդի զանգուած հայր:

Եւ երբ թերթենք Տ. Նազարեանի այդ աշ-
խատութիւնները և տեսնենք, թէ ինչ քա-
նակութեամբ պատկերներով ու իւլիստրա-
սիօններով են զարգարուած նրանք և որչափ
շքեղ կերպով և որչափ բազմերանգ, — այստեղ
դուք կը գտնէք և հայրենի երկրի տեսարան-
ներ, և սրբազան վայրերի ու շէնքերի նկար-
ներ, և մեր սրտին մօտ ազգային գործիչների
պատկերներ, և մեզ ատելի անձանց յոեխներ,
որոնց նոյնչափ կարևոր է ատել, որքան մեր ազ-
գային բարերարներին սիրելը: Եթէ ասում եմ, այս-
բոլորը չմոռանանք, այն ժամանակ կը հասկա-
նալ, որ տպագրական գործի մի թանգարան է Տ.
Նազարեանի հրատարակութիւնները. և համարձակ
կարելի է ասել, որ հայոց ազգի մէջ ոչ միայն
որևէ անհատ, այլ և ոչ մէկ հիմնարկութիւն
չկայ, որ ունենար կլիշէների այնչափ վիթխարի
ժողովածու, որչափ Տիգրան Նազարեանը, և այն՝
ոչ միայն ցեղային պատկերների և տեսարան-
ների, այլ և եւրոպական անձանց և տեղեաց:

Աւելացրէք սրա վրայ և այն, որ Տ. Նա-
զարեանը միակն է մեր մէջ, որ անձամբ ներ-
կայացնում է հայկական մամուլը եւրոպական
Մամուլի Միջազգային Դաշնակցութեան մէջ, չզան-
գաղելով գրեթէ իւրաքանչիւր տարի ուղևորուե-

լու եւրոպա, որով և առիթ է ունենում դիտել
և ուսումնասիրել եւրոպական տպագրութեան
վերաբերեալ նորութիւնները և ներմուծել այն
իր հրատարակութեանց մէջ. նոյն իսկ ինքը
հաստատեց «Արօր» տպարանը, որը նոյնպէս օրի-
նակելի էր:

Կոմս Տոլստոյի յօբելեանին էլ Պորտուգա-
լիայի գիտնական, ճեմարանական, գրական,
արուեստագիտական, թատրոնական, դպրոցա-
կան հաստատութիւնների և մամուլի կողմից
պատգամաւոր է ընտրուած Տիգրան Նազարեան,
որին Լիսբոնից ուղարկուած Տոլստոյին մատու-
ցանելիք ուղերձի տակ ստորագրած են վե-
րոյիշեալ հաստատութիւնների նախագահները՝
թուով 12 հոգի՝ գիտնականներ, մինիստրներ,
գրականագէտներ և այլն:

Բացի այդ ընդհանուր կոմիտէից Տ. Նազա-
րեանին տրուած է լիազօրութիւն անձամբ ներ-
կայանալ վերոյիշեալ հաստատութիւնների կող-
մից յօբելեարին և ողջունել նրան՝ մատուցանելով
ուղերձները:

Ապա Տ. Նազարեան ընտրուած է համայն
ռուսական կայսրութեան մէջ միակ լիազօր ներ-
կայացուցիչ Պորտուգալիայի, որի միջոցով և
կատարում է յարաբերութիւն ռուսական գրա-
կան-լրագրական աշխարհի հետ:

Ամբողջ աշխարհի մէջ տպագրական գոր-

ծր այնպէս հարուստ ներկայացուցիչ չի ունեցել. որպիսիքն են Վենետիկի և Վիէննի Մխիթարեանները և Կովկասում Տիգրան Նազարեանը: Եւ եթէ ընթերցողն իր բարի աչքով տեսնէ Տ. Նազարեանի սեփական խմբագրութեամբ հրատարակուած պարբերական թերթերը և հրատարակութիւնների երկար ու ձիգ ցուցակը, որոնց հետ և մեծագիր գրաւիւրներն ու օլիօգրաֆիաները, որոնց գովասանքը իմ ոչժերից վեր է, — կը մնայ միանգամայն ապշած, թէ ինչպէս է կարողացել մի անհատ, և այն՝ մեր ապառաժ կեանքի մէջ, — ուր ծաղիկներ չեն բսնում և կաղնիներ են շորանում և թզուկները վիթխարիների վրայ արհամարհանքով նայում, — այն, այսչափ բեղմնաւոր գործեր կատարել: Եւ դեռ այդ չէ բոլորը. Տ. Նազարեանի հոգու արմատական յատկութիւններն են՝ հեզ սիրտ, համեստ ու ազնիւ բնաւորութիւն:

Եւ այս բոլորի դիմաց մեր սիրտը լցւում է անհուն բերկրութեամբ, որ մեր հայրենակիցների մէջ մենք ունեցել ենք և ունենք, Աստուծուն փառք, Տիգրան Նազարեանի պէս մի օրինակելի — և կամ ասեմ՝ անօրինակ — հայ մարդի տիպար: Թող այն մանուկները, որոնք կը թուել են Ադրիւրի օգնութեամբ, ամենից առաջ օրինակ վերցնեն Ադրիւրի խմբագրից՝ այդ աննկուն,

անընկճելի, յամառկոտ եռանդից: Ահա իսկապէս որտեղ կարելի է գործադրել հիանալի գրուածը՝ «Նախ առևեր եւ այսպիսի ուսուցաներ», փոխադրելով այն՝ «առևեր եւ ուսուցաներ»:

Սակայն Տիգրան Նազարեանի — այդ՝ ոգեւորութեան անսպառ աղբիւրի — մասին կարելի է շատ երկար խօսել, խօսել և ոչ դատարկաբանել, վասն զի փաստալից են նրա կեանքը և գործունէութիւնը: Իսկ տեղի բնորոշ սղութեան պատճառով ես ստիպուած եմ վերջացնել խօսքս, մի երկտողով յիշեցնելով բարեմիտ ընթերցողին, որ Տ. Նազարեանը իր հօրական *գանձը*, — որը՝ ի դէպ ասած՝ ժառանգել էր ինքը միայնակ, իբրև միակ զաւակ, և իր մայրը՝ տիկին Զարուհին, որը ի դէպ է ասել՝ նշանաւոր Հախումեան տոհմիցն է. — իր *գանձը*, խօսքի բուն մտքով, զրեց ամբողջովին իր պարբերական և այլ հրատարակութիւնների վրայ, միշտ աջակից ունենալով իւր ծնող-մօրը: Իսկ նրա մայրը նոյնպէս հայ նահապետական օջախի հրաշալի տիպար է հանդիսացել. իր միածին որդովը, վերջինիս դեռ մատղաշ հասակում, ամուսնուցը որը մնալով, առ յաւիտեան նուիրեց իրեն փոքրիկ Տիգրանի դաստիարակութեանը: Բացի իր որդուց՝ նրա համար աշխարհում ոչինչ գոյութիւն չունէր, և այդ լուսամիտ կիներ զարձաւ երիտասարդ Տիգրանի մտերիմ և սրտա-

կից բարեկամը և նրա գործունէութեան հաւատարիմ ընկերը: Իր շքեղ, պալատական կեանքից զիտակցարար մտնելով հայ-խմբազրի ցրտուկ զբասնեակը, նա այնուամենայնիւ միշտ ոգևորութեան թալիսման էր հանդիսանում իր որդու համար: Հարստահարուած, սրտնեղուած, տանջուած, նիւթապէս և ֆիզիքապէս հիւծուած Տիգրանը հայ աշխարհի ցրտութիւնից երբ տուն էր վերադառնում, նորից ոյժ և ոգի էր առնում իր գլխաւոր մօր զրկի մէջ և թարմ եռանդով զարձեալ ելնում գործելու և գործելու:

Ամեն բան կորցրած Տիգրան նազարեանի և իր մօր՝ տիկին Զարուհու միակ նպատակն է շարունակել Աղբիւրի հրատարակութիւնը, ապահովել նրա կենսալից գոյութիւնը, որի համար և խզեցի ես այս անգամ Տ. նազարեանի սփինքսային լուծութիւնը, պատկերացնելով սուս. ցիւն ակզաւ նրա գործերը հայ ազգի առաջ, որպիսի գործերը և կեանքը ընթերցողը կը տեսնի աւելի մանրամասն սոյն գրքոյկի մէջ, որը Աղբիւրի Յօրէչեանական Յանձնաժողովի յանձնարարութեամբ կազմել է մեր ժրաջան պ. Մ. Յ.:

Տիգրան նազարեանի և իր մօր՝ տ. Զարուհու դիմաց՝ ես ինձ գտնում եմ իբրև սրտիս հարսզատնների օջախի, և հայ ազգի պայծառութեան համար մտորող անձինք, ես հաւատացած եմ, նոյնը կը զգան: Ուստի այս միակ օրը, որ

մեզ վիճակուել է հանդիպել Տ. նազարեանին և առանց քաշուելու նրա հրեսին ճշմարտութիւնն ասել, նուիրենք նրան մեր հայկական սրտերի ամենամաքուր զգացմունքը և երախտագիտութիւնը և ուրախութեան ու մխիթարութեան գէթ մի օր դարձնենք նազարեաններին յօրելեանի այս մի օրը և զարագուիս շինենք նրան՝ Աղբիւրը առ յաւէտ հոսեցնել տալու:

Յօրել. Յանձնաժողովի նախագահ՝

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Այս քաղաքի մասին խոսելիս ասում են, որ այն քաղաքն է, որտեղ Մովսեսը արձակ էր արել Գարգաթիսին, որը հարձակվել էր Իսրայելի վրա։ Այս քաղաքը գտնվում էր Եգիպտոսի սահմաններում, որտեղ Մովսեսը հարձակվել էր Գարգաթիսի վրա, որը հարձակվել էր Իսրայելի վրա։

Այս քաղաքի մասին խոսելիս ասում են, որ այն քաղաքն է, որտեղ Մովսեսը արձակ էր արել Գարգաթիսին, որը հարձակվել էր Իսրայելի վրա։ Այս քաղաքը գտնվում էր Եգիպտոսի սահմաններում, որտեղ Մովսեսը հարձակվել էր Գարգաթիսի վրա, որը հարձակվել էր Իսրայելի վրա։

Այս քաղաքի մասին խոսելիս ասում են, որ այն քաղաքն է, որտեղ Մովսեսը արձակ էր արել Գարգաթիսին, որը հարձակվել էր Իսրայելի վրա։ Այս քաղաքը գտնվում էր Եգիպտոսի սահմաններում, որտեղ Մովսեսը հարձակվել էր Գարգաթիսի վրա, որը հարձակվել էր Իսրայելի վրա։

I

Տ Ի Գ Ր Ա Ն Ն Ա Չ Ա Ր Ե Ա Ն

(Կենսագրական համառոտ ակնարկ)

Այս քաղաքի մասին խոսելիս ասում են, որ այն քաղաքն է, որտեղ Մովսեսը արձակ էր արել Գարգաթիսին, որը հարձակվել էր Իսրայելի վրա։ Այս քաղաքը գտնվում էր Եգիպտոսի սահմաններում, որտեղ Մովսեսը հարձակվել էր Գարգաթիսի վրա, որը հարձակվել էր Իսրայելի վրա։

Իր բարեկամներից մէկին, որ նրանից կենսագրական տեղեկութիւններ էր խնդրել մի այլսատութեան համար, Տիգրան Նազարեանը 1907 թուին գրում է, ի միջի այլոց.

«Ես թէև եկել եմ այն համոզման, որ եսական մարդ-անհատին ոչ ոք չպիտի ճանաչի, այլ միայն հաւաքական-մարդը պիտի յիշատակուի և արձանագրուի նրա էպոխան և հէնց այդ տենդենցն էլ մտցրել եմ իմ Արդա պիէսի մէջ,—այնուամենայնիւ մինչև այդ ֆանտազիս ով գիտէ երբ իրագործուելն ինձ իրաւունք չիմ համարում քո պահանջը թողնել անկատար... Իբրև յառաջաբան այսքանս միայն իմացիր, որ... եթէ այս իմ կեանքը իմս չլինէր, այլ մի ուրիշինը, և ինձ այսչափ յայտնի, անտարակոյս ես վաղուց գրած կը լինէի մի պատմութիւն, որ շատ ողբերգութիւններից ողբալի կըլինէր, շատ կոմեդիաներից աւելի հետաքրքրաշարժ և լի բեմասէանատրիքուտներով ու շատ ֆարսերից աւելի զաւելչական»:

Ոչ ոք չէր կարող սրանից աւելի սրամիտ կերպով բնորոշել Տիգրան Նազարեանի կեանքն ու գործունէութիւնը, քան այդ արել է ինքն իր բարեկամին գրած այս մի քանի տողերով:

Եւ այս տողերից աւելի լաւ առաջաբան չէինք կարող տալ այն կենսագրութեան, որ առաջ ենք բերում Ձեզ:

Տիգրան Նազարեանը ծնուել է Շուշում 1858 թ. սեպտեմբերի 29-ին իրենց սեպհական տանը, որ մի կատարեալ պալատ էր: Աղբիւրի հրատարակութիւնը սկսելուց մի փոքր առաջ, 1881 թուին, երբ Նազարեանը Շուշուց տեղափոխուել էր Թիֆլիս, այդ տունը գրաւ զրեց Թիֆլիսի ազն. կալ. բանկում: Երեք տարի յետոյ տունը վաճառուեց, իսկ 1905 թուին, թուրք-հայկական ընդհանրումների ժամանակ, այրուեց:

Տիգրանի մայրը, տ. Զարուհին, ծնուած Հախումեան անուանի տանից, ամուսնացել է հազիւ 12 տարեկան հասակում:

Հայրը ամուսնանալուց յետոյ դնացել է օտարութիւն Կ. Պոլիս և Եւրոպա. մնացել այնտեղ տարիներով, մանաւանդ Լայպցիգում: Նազարեանց տունն ընդարձակ առևտուր ունէր Եւրոպայի և Ասիայի հետ: Թեհրանը, Քարիզը, Մոսկուան, Կ. Պոլիսը, Վենետիկը, Լոնդոնը կապուած էին Ղարաբաղի հետ առևտրական խոշոր ձեռնարկութիւններով, որոնց մէջ Տիգրանի հայրը՝ Յակոբջան Նազարեանը իր 6 եղբայրներով և ծերունի հօր հետ մի մեծ սինդիկատ էր կազմում: Քանի որ եղբայրները համերաշխ էին, ոչ մի ոյժ ու մրցում չէր կարողանում նրանց ընկճել, բայց երբ հայկական անմիաբանութիւնը ոտք դրեց նրանց տունը, վնասը վնասի ետևից հասաւ, և բաժանուեցին եղբայրները, ու կործանուեց հայրական հարուստ տունը:

Թիֆլիսում 50-ական թուականներին Շադինովի քարվանսարայի այրուելովը, Նազարեանները կորցրին 60—70 հազար ռուբլու մետաքս: Մոսկուայում ռուս վաճառականները կերան աւելի քան 100 հազար ռուբլի: Կ. Պոլսում կորցրին 7 հազար լիբրա, իսկ Թեհրանում և Թաւրիզում մի քանի հարիւր հազար: Եւ այդ բոլորը հազիւ 10 տարուայ ընթացքում:

171A

389 4177

Որովհետև տիկ. Զարուհին երկար ժամանակ գաւազի չունէր, այդ պատճառով խաչերին և սուրբերին ուխտ էր անում. ի միջի այլոց ուխտել էր, որ եթէ գաւազի ունենար՝ նրան կընուիրի Աստուծոյ տաճարին:

Վերջապէս ծնում է Տիգրանը, ինչպէս ասացինք, 1858 թ. սեպտ. 29-ին:

Այդ առթիւ նրա ծնողները քաղաքի հինգ եկեղեցիներում ժամ ու պատարագ են անել տալիս, մատաղներ անում, աղբատներին և համբարներին ճաշ տալիս. իսկ նրանց տանն ութ օր ու գիշեր տեղի են ունենում փարթամ խնճոյքներ ու ճաշկերոյթներ, որոնց մասնակցում են քաղաքի ամբողջ բնակչութիւնն անխտիր—հայ, թուրք, ռուս:

Նազարեանների տունն այն ժամանակ, ինչպէս ասացինք, կատարեալ պալատ էր եռյարկանի, շատ բարձր, լուսաւոր սենեակներով. դռները, պատուհաններն ու առաստաղը շինուած էին իսկական ընկուզենուց, իսկ արդուզարդը և կահ-կարասիքը—բոլորը մետաքս, թաւիչ, շղարչ և բրոնզ արտասահմանից:

Որպէս զի սենեակների և պատշգամբի պատերն աւելի լաւ փայլէն, մօքրել են 30,000 հաւկիթի սպիտակուցով, և այդ օրը Շուշում Տիգրանի ծնուած սենեակումն են կայցրել առաջին պատատուը, որ նրա հայրն ուղարկած է եղել Լայպցիգից:

Տիգրանի ծնուած օրը նրանց տան լայնատարած բակն ուղտերի քարվան է մտել բեռնուած ոսկով ու արծաթով, որ Նազարեանները փոխադրում էին արտասահմանից և Մոսկուայից Պարսկաստան՝ պարսկական դրամ կտրելու համար:

Սենեակի նոր սլաստառի հոտից երեխան ուշաթափուում է. ռուսի չսպասելով եօթ օրուան և իրենց սոհմային կնքահօր քաղաք ժամանելուն, շտապում են

կնքել նրան, որ *սատանի փայ չլինի*, և ապա տեղափոխուամ ուրիշ սենեակ, ուր նա կազդուրուամ է: 8-րդ օրը քաղաք է հասնում կնքահայրը և նրա պատուին կնուկնքի հանդէսը կատարուամ է նորից: Սակայն, ըստ տեղական սովորութեանց, Նազարեաններն ունէին և թուրք քրիվա, որ նոյնպէս իրն է պահանջում. սա ևս քառասուն օր շարունակ խոնչաներով քաղցրեղէններ ու նուղլ և քառասուն գլուխ շաքար է ուղարկում, որ ամեն օր բաժանուամ է եկող-գնացողին. ապա քառասներորդ օրը քրիվան օրօրոցի վրայ կախելու համար բերում է թիլիսմներ և մի շարք յուրունքներ կազմուած հին դրամներից, որոնց մէջ կային շատ նշանաւոր և հազուագիւտ հայկական դրամներ Տիգրան թագաւորի ժամանակից:

Տիգրանի մայրն ուխտուամ է մի ամբողջ տարի չհամբուրել իր երեխային, չկտրել նրա գլխի մազերը և պահել նրան աղքատ երեխաների. նման և իր այդ ուխտը կատարում է սրբութեամբ: Նրբ երեխան դառնում է մի տարեկան, նրան տանում են Տիգրափայտ սրբատեղին, շրջակայ գիւղերի երեխաներին և կանանց բաժանում են այդ օրուայ առիթով երեխայի համար կարած շատ թանկագին շորեր, մատագներ մորթում, խնձոյքներ սարքում, երեխայի մազերը կտրում, սրբին ղուլ (գերի) անում և վերադառնում Շուշի:

Հագիւ երեխան սկսում է թոթովել, նրան՝ չորս տարեկան՝ տալիս են Հախունց Տէր-Վարապետի դպրոցը. Այդ օրուանից Տիգրանն առաւօտ-երեկոյ եկեղեցի է գնում, ամեն շաբաթ նրա համար մետաքսի գոյնզգոյն ժամաշապիկներ են կարում, որ տեւում է մինչև նրա 8 տարեկան դառնալը: Թաչը ջրից հանել, տեղի-անտեղի բեմի վարագոյրը քաշել՝ եկեղեցու երէցփոխը նրա արտօնութիւնն էր դարձրել: Անթիւ անդամ կուլաներով Տիգրանն

ֆրենց տանից ուսով ջուր է կրել Ղազանչեցոց եկեղեցու շինութեան համար:

Նոթ տարեկան հասակում Տիգրանին Տէր-Վարապետի մօտից տեղափոխում են Պարիզից նոր եկած Յով-աէփ Թառումեանի դպրոցը, ուր աւանդուամ էր ֆրանսերէն լեզուն. աշակերտներին սովորեցնում էին, ի միջի այլոց, մարմնամարզութիւն, մօմից զանազան պտուղներ չինել և լուսանկարչութիւն:

Ութ տարեկան հասակում Տիգրանին տեղափոխում են նշանաւոր լեզուագէտ Գալուստ վարդ. Փափագեանի դպրոցը, ուր հայր սուրբն իր շատ սահմանափակ թուով (ընդամենը 12 հոգի) աշակերտներին սովորեցնում էր հայերէն (գրաբար), ֆրանսերէն, գերմաներէն, իսկ Կոստ. Տէր-Աստուածատրեանը („Горе отъ ума“—ի թարգմանիչը)—ուսերէն:

Տասը տարեկան հասակում Տիգրանը թարգմանում էր ֆրանսերէնից հայերէն և հայերէնից ֆրանսերէն Աստուածաշունչը, Հոմերոսը, Տելեմաքը և այլն:

Տան մէջ նրա դաստիարակներն էին նկարիչ Ստեփաննոս Ներսէսեան (Սահակ եւ Մեսրոպ պատկերնների հեղինակը), Պետրոս Շանչեան, Պերճ Պաօչեան, Գարեգին Մուրադեան (Մելքիսեդէկ արքեպիսկոպոս) և քեռակինը՝ Մարիամ Հախումեան—մի խելացի, եռանդուն, լուսամիտ կին, որի ընթերցարանն այդ ժամանակ ստանում էր մայրաքաղաքների շատ նշանաւոր հանդէսներ և պարբերական թերթեր:

Տիգրանի հայրը Պոլսից և Վենետիկից շարունակ ուղարկում էր հայերէն լեզուով լոյս տեսնող բոլոր հրատարակութիւնները իւրաքանչիւրից մի քանի օրինակ, իսկ Խրիմեան Հայրիկի Արձուի Վասպուրականը և Ծիլն Աւարայրին շատ օրինակներ: Վասպուրական Արձուին նա նուիրել էր, ի միջի այլոց, մի մամուլ և օժանդակել

նրա հրատարակութիւններին: Տատեանները օժանդակութեամբ վնասակարիքները հրատարակած հայերէն երկրագունդը և ատլասները Նագարեաններն ունէին երկ-երկու օրինակ, որ յետագայում Տիգրանն ուրիշ շատ թանկագին գրքերի և հանդէսների հետ նուիրեց Ղարաբաղի թեմական դպրանոցին: Նրանց տանը մինչև 1868 թուականը կարելի էր գտնել աշխարհումս հայերէն լեզուով լոյս տեսած բոլոր հրատարակութիւններն անխտիր:

Հօր մահից յետոյ Տիգրանին հանեցին Փափագիւան վարդապետի մօտից և տուին Շուշու դաւառական դըպրոցը, որը շուտով վերածուեց քաղաքային: Առաջին դասարանի աշակերտ, յաճախ նա ֆրանսերէն դասեր էր տալիս չորրորդ դասարանցիներին ուսուցչի բացակայութեան ժամանակ:

Երկրորդ դասարանումն էր, որ նրա երկու շարդրութիւնները—«*Համբաղուզենց Գրիգորի տան հրդեհներ*» և «*Շուշուց Թթու ջուրը*»—տեսուչը կարգաց բոլոր աշակերտների առաջ և այն ժամանակուայ Կովկասի ուս. շրջանի հոգաբարձու Յանովսկու կողմից, որ այդ ժամանակ Շուշի էր եկել, պարգևատրեց նրան երկու գրքով:

Սկզբում Տիգրանին շատ էին հետաքրքրում աստղաբաշխութիւնն ու բնական գիտութիւնները, մանաւանդ քիմիան: Պետերբուրգից բերել էին տուել նրա համաքփիմիական կարծիքն, որն աւելի հարուստ էր, քան դըպրոցինը:

Սակայն դպրոցը դեռ չաւարտած, Տիգրանը սիրահարուեց քաղաքատնտեսութեան վրայ, թողեց քիմիան և նրա սիրելին դարձան Լասսալ, Ադամ Սմիտ, Պրուդոն, Իրեպեր և այլն:

Տիգրան Նագարեանի անունը որոշ չափով կապուած է Շուշու հայ բեմի հիմնարկութեան հետ:

60-ական թուականների սկիզբներին Չմշկեան, Ամերիկեան, Մանդինեան գնացել էին Շուշի և ներկայացումներ էին տալիս: Տիգրանին, որ այն ժամանակ հազիւ 5 տարեկան էր, տանում էին թատրոն: Ներկայացումներն այնքան մեծ տպաւորութիւն են թողնում նրա վրայ, որ նա իր ընկեր և ազգակից երեխաների հետ տանը շարունակ թատրոն էր խաղում: Իրանից երկու տարի յետոյ նրա քեռու մեծ տղան՝ Նիկոլայ Հախումեան, որ այդ ժամանակ ուսանում էր Քիֆլիսի դիմնագիտյում, խաղում է Շուշանիկ ողբերգութիւնը Չմշկեանի և այլոց հետ: Սա գրում է այս մասին Տիգրանին: Վերջինս այնքան է հրապուրւում, որ վճռում է ինքն էլ խաղալ նոյն պիէսը Շուշում: Քեռու տղան ուղարկում է Քիֆլիսից Շուշանիկը և 1868 թուին խաղացւում է այդ պիէսը Համբարձում-աղա և Մնացական Հախումեանների տան ընդարձակ, խաչաձև դահլիճում ղեկավարութեամբ Մնացական Հախումեանի (Պետրովսկիյ ակադեմիայի ուսանող) և ուստա Աւագի (Թառումեանց, մի շնորհալի նկարիչ, Այվազովսկու երբեմն ընկերակից, բայց կատարեալ մի դերվիչ, իդէալիստ և ազգասէր): Բոլոր մասնակցողները 8—13 տարեկան տղաներ էին, ի միջի այլոց՝ վաղաթառամ շնորհալի երիտասարդ, թեմական դպրանոցի աշակերտ Ադամայ Ադամալեան, որ կատարում էր Վարդանի դերը, Սամսոն Չերքեզեան—Մերուկ ծառայ: Աղջկանց դերերը նոյնպէս կատարում էին տղերքը—Ալէքսանդր Խանդամիրեան, Տիգրան Փուանդիւլեան, Նիկոլայ Հախումեան, վերջինս կատարում էր Շուշանիկի դերը:

Այդ օրուանից թատրոնը Տիգրան Նագարեանի հոգան ու զբաղմունքն է դառնում: Հօր մահից մի երկու

տարի յետոյ, դեռ դպրոցը չաւարտած, նա բոլորովին անձնատուր է լինում այդ գործին. հազիւ 15 տարեկան պատանի, նա ժողովում է իր շուրջը նախկին դերասաններին, խորհրդակցում ուստա Աւագի հետ և սկսում ընդարձակել բեմը: Մեծ պասուայ ընթացքում ուստա Աւագը նկարում է նոր վարագոյր՝ *Ոգի Հայաստանի*, որը կանում է շատ տասնեակ ֆունտ ձէթ և քաջադլու (հողանդական) զուտ օսկիներ: Ոսկին գործադրուած էր Հայաստանի Ոգու ապարանջանի և սգաւոր Հայաստանի թագի համար: Շքեղ էին և դեկորատիւնները:

Ներկայացումների երկրորդ սերին սկսուեց Վառդանանց պատերազմով: Առաջին գործողութեան մէջ Տիգրան Նազարեանը դեր չէր ստանձնել, որպէս զի հիւրերին ընդունէր. 2-ում կատարեց Վահան Ամատունու, 3-ում Ղևոնդ երէցի, 4-ում Յովսէփ կաթուղիկոսի, իսկ 5-ում Յերուկ Մառուկի դերը: Իրամայր յետոյ ներկայացուեց էս էլ քի մոցիփուքին վողըվիլը, որի մէջ Տիգրանը կատարում էր քաչալ Կարապետի դերը:

Թատրոնը գրաւել էր մեծ հասարակութիւն: Ներկայ էին շատ թուրք խանդաղէներ և բէգեր, որոնց կանանց համար պատրաստուած էին հասարակութիւնից բաժանուած օթեակներ:

Այդ օրուանից թատրոնը հիմք բռնեց Շուշում Տիգրան Նազարեանն իր ընկերներով, նուագածու Իանիլուկն իր խմբով, ուստա Աւագն իրայիններով միատեղ շարունակում էին ներկայացումները կանոնաւորապէս ամսական 2—3 անգամ:

Սակայն մի միջադէպ առ ժամանակ սառեցրեց նրան թատրոնից:

Քաղաքային դպրոցի տեսուչ Նիկիտինը առաջարկեց նրանց միանալ ռուսների հետ և միասին խառն ներկայացումներ տալ հայերէն և ռուսերէն, որովհետև զուտ

ռուսերէն ներկայացումներին ժողովուրդ չէր յաճախում: Ուրախութեամբ ընդունուեց ռուսների առաջարկը: Կազմուեց տեղական ռուս պաշտօնեաներից, նրանց կանանցից և աղջիկներից մի մեծ խումբ և միացաւ հայերի հետ, որով եղան մօտ 40—50 հոգի: Սկզբում գործը շատ հարթ էր գնում, երբ խմբի մէջն էր գաւառական բժիշկ լեհ Վերթիկցիին: Ժողովուրդը սիրով յաճախում էր թատրոն: Սակայն մի տարի չանցած՝ ռուսները հայերին առաջարկեցին *Ոգի Հայաստանի* ձիթանկար վարագոյրը փոխարինել մի ոչինչ չարտայայտող նոր վարագոյրով: Հայերը զիջեցին: Բայց ոտնձգութիւնները շարունակուեցին. ռուսներն առաջարկեցին հայերէն պատմական պիէսներ այլ ևս չխաղալ, այլ վողըվիլներ:

Կարնանը, հէնց այն տարին, երբ Տիգրան Նազարեանը քաղ. դպրոցի աւարտման վկայական պիտի ստանար, տեսուչ Նիկիտինը մի նոր նման առաջարկ արեց հայ թատերասէրներին. Նազարեանը, իբրև պարագլուխ վերջիններիս, դիմադրեց և թատրոնի բանալին գրպանը դրեց, յայտարարելով որ ընկերակցութիւնը լուծուած է: Քննութիւնները վերջացան և տեսուչը Տիգրան Նազարեանի ատեստատի մէջ ռուսերէնից 3 նշանակեց: Մի փոքր անց ռուսներն առաջարկեցին վերակազմել ընկերութիւն, բայց հայերն ընդ միշտ կտրեցին նրանց հետ յարաբերութիւնները:

Որպէս զի թատրոնի ազգային գոյնը չխախտուի, հայերը բեմը մի փոքր ուշ տեղափոխեցին թեմական դպրանոցի երկու դահլիճն ըրը, որոնց միջի պատը քանդեցին: Այդ ժամանակ Ղարաբաղի թեմական առաջնորդն էր Արիստակէս վարդապետ Սեդրակեանը: Սա սիրով թողատրեց դպրանոցի երկու դահլիճները հայ թատերասէրների տրամադրութեան տակ դնել: Տեղափոխեցին այդտեղ 40 ձեռք թատրոնական զգեստներ, բաւակա-

նաչափ դեկորասիօններ և Ոզի Հայաստանի վարագոյրը: Սակայն պաշտօնական հրաման եկաւ, որով արգելուով էր այդ վարագոյրը կախելու նաև դպրանոցի բեմի վրայ: Խուճաբը ցրուեց: Առձեռն մնացած 50 բուր. դրամը չգիտէին ինչ բանի գործագրել. վերջը վճռեցին այդ փողը տալ ուստա Աւագին, որ նկարէ հանգուցեալ ընկերակից թատերասէրների յիշատակին Յիսուս մտորումների մէջ (չարչարանքից առաջ Գեթսեմանի այգում աղօթելիս) պատկերը: Թատերասէրները գրեցին իրենց ազգանուններն այդ պատկերի տակ, որն աւագ հինգչարթի օրը հանդիսով օծուեց և կախուեց Ղազանչեցոց եկեղեցում, ուր մինչև այժմ էլ կախուած է:

Յետագայում Տ. Նազարեանի ազգական գեռահատ օրիորդները կամեցան աչակերտական-ընտանեկան մի ներկայացում տալ և հրաւիրեցին նրան իրենց առաջնորդելու: Բեմը սարքուեց տիկին Ղումաշ Թառուսեանի տանը: Ներկայացուեց Աբովեանի Պարսպ վախճի խաչալիքը և մի ուրիշ պիէս: Սակայն Տիգրան Նազարեանը դժգոհ մնաց այդ ընտրութիւնից, որ արել էր ինքը (որովհետև ուրիշ յարմար պիէս չէր գտել) և նոյն իսկ այդ մասին ինքը մի քննադատական էր ուղարկել Մշակին: Այդ բանն առիթ եղաւ նրան մի գիշերում գրելու ձրպասըդ Բալադ կտի, Ղալի աղաքնեան պատկերները: Այս պիէսն ընկերական շրջանում հաւանութիւն գտաւ, բայց հեղինակը թոյլ չտուեց ներկայացնել: Շատ ուշ այս պիէսը տպագրուեց Թիֆլիսում Տիգրան ստորագրութեամբ և շատ անգամ խաղացուել է Շուշում, ի միջի այլոց 1893 թուին՝ Շուշու թատրոնի 25-ամեակին:

Ղառաբաղի թեմական դպրանոցի փայլուն օրերն էին: Շուշի էին հաւաքուած Ղազարոս Աղայեան, Ալէքսանդր Յովհաննիսեան, Կարապետ Էգիլիսեան, Սամուէլ Գիւլգագեան՝ իբրև ուսուցիչներ և Սեդրակ Մանդինեան՝ իբրև տեսուչ, Վասակ Պապաջանեանի տեղ: Թեմական տեսուչն էր այժմ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան:

Տեղական երիտասարդութիւնը սերտ յարաբերութիւն ունէր ուսուցչական այդ ընտիր խմբի հետ:

Նուում էր մտաւոր կեանքը: Ամեն մէկը ձգտում էր իւրովսանն ծառայած լինել ազգի մտաւոր առաջադիմութեան գործին:

Հախումեան ամուսինների (Տ. Նազարեանի քեռու և քեռակնոյ) հիմնած Մարիամեան օրիորդական դպրոցը շատ հալածանքների ենթարկուելուց յետոյ (Խորէն վ. Ստեփանէ տեսուչ) վերածուել էր քաղաքային Մարինեան դպրոցի, բայց հայ ազգային օրիորդաց դպրոցը շուտով ընդհանուր ուժերով վերածնուեց, և Տիգրան Նազարեանը մի շարթուայ մէջ տեղափոխել տուեց այդտեղ քաղաքի շատ աչքի ընկնող բնտանիքների աղջիկներին:

Բժիշկ Առստամեան, ուսուցիչ Ալէքսանդր Յովհաննիսեան և Տիգրան Նազարեան 60-ական թուականների շատ ճոխ գրադարանը, որ մոռացութեան էր տրուած, նորից կարգի բերին և ընդարձակեցին: Մեծ արագութեամբ բացուեց տեղական երիտասարդութեան ախորժակը դէպի ընթերցանութիւն:

Միմէօն Հախումեան ձեռնարկեց Գործ ամսագրի հրատարակութեան, իսկ Տիգրան Նազարեան հիմնեց Հասարակչական գրասենեակ, որի առաջին հրատարակութիւնն եղաւ Նիկողայոս Տէր-Աւետիքեանի Բնար Խօսնակը 1879 թուին: Ապա Տիգրան Նազարեանը տպեց իր թարգմանութեամբ Պոզնանի ուսուցչի օրագրից Հ. Սեւեկեիչի պատմութեամբ, որով, եթէ չենք սխալուում, առա-

ջինն եղաւ, որ հայերին ծանօթացրեց լեհ նշանաւոր գրողի հետ: Այս ընտրութիւնը միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, թէ դեռևս այն ժամանակ ինչ հայեաջք էր կազմակերպել իր համար Տիգրան Նազարեանը գեղեցիկ գրականութեան և մանկավարժութեան մասին: Դրանից յետոյ նա հրատարակեց Ալֆոնս Դոդէից Երկու մանրավէպ, ապա Կ. Կ. Մելիք-Շահնազարեանի (վերջը Տմբլաչի Խաչան) անդրանիկ գիրքը՝ Ղրլրցէ կրնանոց պընր փեւակը:

Շուշուց Տիգրան Նազարեանը թղթակցում էր Մշակին և Մեղուին Շուշուցի և Արցախեցի ստորագրութիւններով, աշխատակից անդամ էր թիֆլիսի Հայոց Հրատարակչութիւնները Շուշուցի եղած ժամանակ տարածում էր մեծ քանակութեամբ, նոյնպէս Մշակ և Մեղու լրագիրները, ինչպէս և այլ գրքեր:

Բացի դրանից, աջակցում և առաջնորդում էր Ղաւրաբաղ այցելող եւրոպացի տուրիստներին և լրագրողներին: Այդ ժամանակները, ի միջի այլոց, Շուշուցի էր եկել «Tour de monde» հանդէսի իմբագրուհի տ. Սերէն. Տ. Նազարեանի աջակցութեամբ նա հանեց Շուշուց և շրջակայքի լուսանկարները, որոնք նախ տպագրուեցին յիշեալ հանդէսի մէջ և ապա լոյս տեսան առանձին գրքով:

1881 թ. նոյեմբ. 18-ին Տ. Նազարեանը մշտապէս տեղափոխուեց թիֆլիս, ուր և 1883 թ. հիմբ դրեց Աղբիւրին: Սկզբում նա վարում էր գանձապահի օգնականի և ապա գանձապահի պաշտօն այդ ժամանակները թիֆլիսում նոր հիմնուած Քաղ. Վարկի Ընկերութեան մէջ, որի նպատակներից մէկն էր արդիւնքի մի մասը յատկացնել հայոց թատրոնի ապահովութեան գործին: Վերջինս յայտնի է, այդ ընկերութեան հիմնադիրները՝ իշխ. Ն. Ամատունի, Ա. Յովհաննիսեան, իշխ. Կ. Բահրութեան և այլք կազմում էին թատրոնի կոմիտէն, որի գործու-

նէութիւնն ընդգրկում է թիֆլիսի հայոց թատրոնի ամենափայլուն ժամանակաշրջանը: Տ. Նազարեանը միևնոյն ժամանակ հաշիւները վերաստուգողի պաշտօն էր կատարում Իւխ. Զորջաձե և Ընկ. Ֆրեմայում, որի տէրերն էին Բալաբէկ Մելիք-Ղարաբեօղեան, Մարկոս Դոլուխանեան և այլք: Այնուհետև, երբ Աղբիւրի հրատարակութեան գործն ընդարձակուեց, նա թողեց այդ մասնաւոր պաշտօնները և ամբողջովին նուիրուեց Աղբիւրին:

1887 թ. Տ. Նազարեանը գնաց Պետերբուրգ, որտեղ, ի միջի այլոց, ծանօթացաւ թղթի նշանաւոր գործարանատէր Վարդուհիւնների հետ և նրանց հետ պայմանաւորուելով թիֆլիսում բաց արեց թղթի և դպրոցական ու գեղանի առարկաների պահեստ, որտեղից տեղական հրատարակիչներին էօժան և ընտիր թուղթ էր մատակարարում: Այս պահեստը երկար դիմանալ չկարողացաւ և փակուեց, որովհետև գնորդները նրան ծանր պարտքերի տակ ձգեցին:

1889 թ. Տ. Նազարեանը, փիւլ Սիմոնի հրաւերով, գնաց Պարիզ մասնակցելու ցուցահանդէսի առթիւ այնտեղ գումարուած գրականագէտների կոնգրեսին: Վերադարձին մի ընդարձակ ուղևորութիւն կատարեց Եւրոպայում, այցելելով, ի միջի այլոց, Ս. Ղազար և Վիէնն, որտեղ Միթարեան միաբանութիւնը պատուեց նրան մի հանդիսաւոր ճակիւրդով: Եւրոպայից նա բերեց իր հետ տպագրական մի ընտիր մեքենայ և տառեր թիֆլիսում նոր բացած Արօ տպարանի համար, որը, սակայն, Յ տարուց յետոյ ստիպուած հղաւ վաճառել պարտքերի պատճառով:

1890 թ. հիմնեց Տարագ պատկերադարձ շարժաթերթը, որը Աղբիւրի հետ միասին տարածուած էր շքեղ պրեմիաներով: Տարագին կից հրատարակուած էին առաջին անգամ հայոց մէջ Պարիզի մոդաներ: Տարագը իբրև-

շարաթաթերթ գոյութիւն ունեցաւ 16 տարի. ներկայումս նա հրատարակում է ամիսը մի անգամ:

1892 թ. յունուարի 1-ից Տ. Նազարեանը սկսեց հրատարակել նաև ռուսերէն ամենօրեայ էջան լրագիր՝ АНОНСЪ, որ տարածուում էր գաւառական թերթի համար նոյն իսկ մեր ժամանակում անհուշատալի մի թուով— օրական 12,000 օրինակ (չափ 2 կոպ.): Այս թերթը սակայն գոյութիւն ունեցաւ միայն 1 1/2 տարի. դադարեց Գ. Միրզոյեանի և Ս. Լիսիցեանի կապալի ժամանակ (Տես սոյն զրքի մէջ «Աղբիւր 25 տարում») և դադարումից յետոյ կառավարութիւնն այլ ևս թոյլ չտուաւ Տ. Նազարեանին նրա վերստին հրատարակումը:

Գրեթէ ամեն տարի գնալով Պետերբուրգ և Եւրոպա, Տ. Նազարեանն ընդարձակում է իր յարաբերութիւնները եւրոպացի լրագրողների, արուեստագէտների հետ, ուսումնասիրելով գլխաւորապէս տարգրական-հրատարակչական գործը: 1891 թ. Ռուսիայում յայտնի նշանաւոր հրատարակիչ Գերման Հոպպէն Տ. Նազարեանին արդիւնաւոր պաշտօն է առաջարկում իր հրատարակչական ընկերութեան մէջ, առաջարկելով նմանապէս որ Աղբիւրի ու Տարագի հրատարակութիւնը տեղափոխէ Պետերբուրգ: Առաջարկուած պայմաններն ըստ ամենայնի ձեռնառու էին, սակայն Տ. Նազարեանը չընդունեց, չկամենալով իր թերթերը տեղափոխել Թիֆլիսից՝ հայութեան կենտրոնից:

1895 թ. Տ. Նազարեանը գնաց Պետերբուրգում բացուած տարգրական գործերի համառուսական ցուցահանդէսը, ուր մասնակցեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչի հովանաւորութեան տակ գտնուած մամուլի գործիչների համաժողովին, որի նիստերը տեղի էին ունենում բանաստեղծ Մայկովի նախագահութեամբ: Յուշահանդէսում Տ. Նազարեանը պարգևատրուեց գովասա-

նական վկայականով Տարագը չբեղ հրատարակելուն համար: Համաժողովն ընտրեց 12 հոգուց բաղկացած միջանձնաժողով զբաղնական կանոնադրութիւնը բարեփոխելու համար. այդ 12 հոգու մէջ էր և Տ. Նազարեանը:

1890 թ. տեղի ունեցաւ Գրիգոր Արծրունու յրելանը Տ. Նազարեանի նախագահութեամբ: Այս յրելաններ սարքելով Տ. Նազարեանը հակառակորդների մի մեծ բանակ վաստակեց իր դէմ պահպանողականներից: Վերջիններև պարագլուխներից մէկը՝ Արգար Յովհաննիսեանը, որ մինչև այդ ժամանակ շատ բարեկամ էր Տ. Նազարեանի հետ, Արծրունու յրելանից յետոյ այն աստիճան թշնամացաւ, որ լրագրական բանակուիւր հասցրեց դատարանի: Տ. Նազարեանը Ա. Յովհաննիսեանի դէմ դրած իր մեղադրանքի 16 կէտերը հաստատեց, իսկ Յ-ի համար վկաներ չունենալով (այդ 3 կէտերը մասնատր ընդթ ունէին), դատապարտուեց 40 օրուայ բանտարկութեան: Նրան առաջարկուեց պատժից ազատուելու համար ներողութիւն խնդրել Ա. Յովհաննիսեանից. բայց նա իրեն արգար համարելով չհամաձայնեց և 1898 թ. մարտին գնաց Մետեխի բանտը: Այստեղ նա ուսումնասիրեց բանտարկեալների կեանքը և այդ ուսումնասիրութեան արդիւնքը յետագայում տպուեց Տարագում *Իմ նամակները օրիորդ Յուսիկեանին* վերնագրով և Ռադամէս ստորագրութեամբ: Բացի դրանից նա կարգի դրեց բանտի գրագարանը, որի համար նորանոր գրքեր ընծայարեից: Բանտում նա թարգմանեց Նեմիլովիչ-Պանչենկոյի Անուն գիշերներ պատմուածքը, որը տպագրուեց Տարագում, և Զոլայի նշանաւոր ժերմիւնալը, որ այն ժամանակ արգելուած էր Ռուսաստանում:

Տ. Նազարեանն իր երիտասարդութեան ամենալաւ տարիներն անցկացրեց շարունակ հիւանդութեան մէջ

(Չղային հիւանդութիւն, որ առաջացել էր ոյժերի չափազանց լարումից), այնպէս որ ամեն տարի հարկադրուած էր լինում զնալ Եւրոպա: Նա պատել է աւստրիական, շվեյցարական և գերմանական շատ սանատորիաներ ու կուրորտներ, լիովին ուսումնասիրել է այն տեղերի ռեժիմն ու կենցաղը: Այս ուղևորութիւնների ժամանակ քացի այն, որ գտել է իր առողջութիւնը, այլ և այն անգնահատելի օգուտն է ստացել, որ ներս բարեկամութիւն է հաստատել Եւրոպացի շատ գրականագէտների, հասարակական և քաղաքական գործիչների հետ: 1895 թ., Սասունի կոտորածից յետոյ, նա անձամբ միջնորդութիւններ է յարուցել հայազգի դեսպաններ և դիպլոմատներ Նուբար-փաշայի, Նարիմանխանի և Մեքրում-խանի մօտ, ապա տեսակցութիւններ է ունեցել օտար հրապարակասիւսների և քաղաքական գործիչների հետ Վիէննում, Պարիզում և Լոնդոնում: Հետաքրքրուողները մանրամասնութիւնները կը գտնեն այդ ժամանակուայ Տարազում: Խրիմեան կաթուղիկոսի կողմից նա յորդորի մի կոնգակ տարաւ Եգիպտոսի միւնիստր Նախագահ Նուբար փաշային, որ սա դիւանագիտական միջամտութիւն կազմակերպէ կոտորածների առաջնառնելու նպատակով: Վիէննի պարսից դեսպան Նարիմանխանը դիմումներ արաւ ուսուսաց արտաքին գործերի միւնիստր Լոբանով Ռաստովսկուն, նկարագրելով կոտորածների հեռանկարը և ուսուսացիների հարկադրուած քայլերը, որոնք անխուսափելի պիտի լինէին, եթէ կոտորածները չզղարկեցուէին: Բացի սրանից Նարիման-խանի աղջիկները և այլք կրակոտ յօդուածներ տպագրեցին եւրոպական թերթերում, հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելով Հայաստանում կատարուող եղեռնագործութեան վրայ: Նոյն այդ ժամանակները Տ. Նազարեանը պարաբաղցի հայ կանանց կողմից տաճկահայ կանանց

ձեռքով գործուած սպիտակ նուրբ բրդէ դերիացու շալ մատոյց Պարիզում նշանաւոր կին-հրապարակախօս տ. Ադան Ժուլիէտին, հայցելով նրա ջերմ պաշտպանութիւնը հայկական դատին:

Վստահօրէն կարելի է ստել, որ ուսուսաց գործիչների մէջ չկայ մի ուրիշը, որ այնքան ծանօթ լինի եւրոպական գործիչների լայն շրջաններում, որքան Տ. Նազարեանը:

1904 թ., երբ Վիէննում կատարուած էր Միջազգային Մամուլի Դաշնակցութեան տասնամեակը, Տ. Նազարեանը միակ հայն էր, որ հրաւիրուեց մասնակցելու այդ հանդէսին իբրև անդամ յիշեալ Դաշնակցութեան: Այնուհետև նա մասնակցեց նոյն Դաշնակցութեան հերթական կոնգրէսներին 1905 թ. Լիէժում (Բելգիա) և 1907 թ. Բորդօյում (Ֆրանսիա):

Սոյն 1908 թ. Լիսբոնում (Պորտուգալիա) բացուեց Գրականութեան, Արուեստի եւ Խաղաղութեան ցուցահանդէս, ուր Տ. Նազարեանի ջանքերով կար և հայկական բաժին գրականութեան վերաբերմամբ: Տ. Նազարեանն այդ բաժնում ցուցահանելու համար Թիֆլիսից ուղարկել էր մեր մատենագիրների երկերից մի-մի հատոր և նրանց լուսանկարները: Յուցահանդէսը փակուելուց յետոյ նրա բոլոր բաժինները, ուրեմն և հայկական բաժինը, դառնում են Պորտուգալիայի ազգային մատենադարանի սեպհականութիւն: Յուցահանդէսը հայկական բաժնով հարստացնելուն համար Տ. Նազարեանն ընտրուեց Գրականագէտների, Արուեստագէտների եւ Խաղաղութեան միջազգային ընկերութեան պատուաւոր անդամ, որպիսի կոչման արժանացած են եւրոպացիներից Զուգերման, Կարմէն Սիլվա, Հաուստման, Բիերնսոն, Ֆլամարիօն և այլք, իսկ ուսաններից միմիայն Տալստոյ և Մաքսիմ Գորկի:

1906 թ. Տ. Նազարեանը Աղբիւր-Տարագի խմբագրութեան կից բացեց Մամուլի բիւրօ և Գրական-գեղագիտական Սալօն ընդարձակ ընթերցարանով:

Առանձին յիշատակութեան արժանի է մանաւանդ կանանց Չֆնաղ գրաշարանոցը, որով Տ. Նազարեանն առաջին անգամ փորձ արաւ (1904 թ.) կանանց վարժեցնելու գրաշարութեան: Այս գրաշարանոցը, ուր ուսանում էին 8 կին և աղջիկ, դժբաղդարար երկար դոյութիւն չկարողացաւ ունենալ տղամարդ-գրաշարների կողմից յարուցուած արգելքների և սպառնալիքների պատճառով:

Բացի մանաւոր շատ բարեգործութիւններից, Տ. Նազարեանը նուիրաբերել է 1) 1000 ռ. գրքեր և պատկերներ 1891 թ. Կովկասի Հայոց Բար. Ընկ. տասնամեակի առիթով, 2) 500 ռ. գրքեր և պատկերներ Հայուհեաց Բար. Ընկ. տասնամեակի առիթով, 3) 1000 ռ. գրքեր և պատկերներ 1892 թ. խոլերայից վնասուածներին օգտին վաճառուելու համար, 4) 1000 ռ. գրքեր և պատկերներ Ռուսաստանի սովիակների օգտին: Բացի սրանից, Պուչկինի, Լերմոնտովի և այլ յորելեանների առիթով հարիւրաւոր գրքեր և պատկերներ է նուիրաբերել դպրոցական աշակերտների, գրադարանների, զիւղական համայնքների: 1904 թ. խմբագրատան մէջ բացեց գեղագիտական առարկաների ցուցահանդէս Կարմիր Խաչի ընկ. օգտին:

Ստորև առաջ ենք բերում Տ. Նազարեանի հրատարակած գրքերի և պատկերների ցանկը, որից երևում է, որ նա սոսկ իր անհատական ուժերով հրատարակչական գործում արել է այնքան, որքան ոչ մի անհատ չի արել մեզնում մինչև այժմ:

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I. Պատրերական

1. Աղբիւր մամուլի I տարի	1883 թ.
» » II »	1884 »
» » III »	1885 »
» » IV »	1886 »
» » V »	1887 »
» » VI »	1888 »
» » VII »	1889 »
» » VIII »	1890 »
» » IX »	1891 »
» » X »	1892 »
» » XI »	1893 »
» » XII »	1894 »
» » XIII »	1895 »
» » XIV »	1896 »
» » XV »	1897 »
» » XVI »	1898 »
» » XVII »	1899 »
» » XVIII »	1900 »
» » XIX »	1901 »
» » XX »	1902 »
» » XXI »	1903 »
» » XXII »	1904 »

Աղբիւր ամսագ. XXIII տարի	1905 թ.
» » XXIV »	1906 »
» » XXV »	1907 »
» » XXVI »	1908 »
2. Տարազ I տարի ամսաթերթ	1890 »
» II » շաբաթաթերթ	1891 »
» III »	1892 »
» IV »	1893 »
» V »	1894 »
» VI »	1895 »
» VII »	1896 »
» VIII »	1897 »
» IX »	1898 »
» X »	1899 »
» XI »	1900 »
» XII »	1901 »
» XIII »	1902 »
» XIV »	1903 »
» XV »	1904 »
» XVI »	1905 »
» XVII »	1906 »
» XVIII » Գեղափնջիկ	1907 »
» XIX » ամսաթերթ	1908 »
3. Анонсъ օրագիր I տարի	1892 »
» » II »	1893 »
4. Առողջապահական	} Զանազան տարիներում իբրև յաւելումներ:
5. Պարիզի մողաներ	
6. Իլլիւստրաւիօն	
7. Դաստիարակ	
8. Աղբիւրի Բ. քաժին	

II. Պ ր ֆ Ե ր

(Երեւանների եւ ժողովրդ. ընթերցանութիան համար)

1. «Քնար Խօսնակ» հեղ. Ն. Տէր-Աւետիքեանի
2. «Պօզնանի ուսուցչի օրագրից» Սենկելիչի
3. «Երկու մանրավէպ» Ալֆոնս Իոդէի
4. «Սոխակ և խոզարած» Անդերսէնի
5. «Հարս և սկեսուր» Դիկէնսի
6. «Ղըլըցէ կընանոց պընըպէչակը» Կ. Կ. Մելիք-Շահնազարեանի
7. «Երեխաները և նրանց բարեկամները» (պատկերազարդ), փոխադր. Գ. Գաֆեանի
8. «Փայտաչէն խրճիթից սպիտակ տունը» Գարֆելդի, (պատկերազարդ) անգլ. փոխադր. Սիսօևայի
9. «Ժան Բատիստ Լիւլի մանկութիւնը», փոխադր. Տ. Յովհաննիսեանի
10. «Հսկայ մըջիւնը» (պատկերազ.) Աւենարիուսի
11. «Ոսկի ձկնիկ» Պուչկինի
12. » » » II հրատ.
13. «Մշակուած և անմշակ ծառի կեանքը» (պատկերազ.) Կ. Կ. Մ.-Շահնազարեանի
14. «Չարածճի Արամի արկածները» (պատկերազ.) փոխադր. Ա. Սարգսրեանի
15. «Ֆրիդեօֆ դիւցազն» (պատկ.) Աւենարիուսի
16. «Արեգնազան» Ղ. Աղայեանի
17. «Տօրք Անդեղ և Հայկանուշ գեղեցիկ» Ղ. Աղայեանի
18. «Ճաշակ» Ա. Եղիկեանի
19. «Եւրոպա» Լէօպարտի
20. «Տեղագրական նամականի» Ն. Տ.-Աւետիքեանի
21. «Արեւիկան վիպաչխարհ» (պատկերազարդ) փոխադր. Փ. Վարդանեանի

22. «Բասկական լեզենդա» Արտուրո Կամպանի
 23. «Իրիւէ» Յակ. Ղազարեանի
 24. «Գալիա» փոխադ. Ս. Հախումեանի
 25. «Աղա Մամէզ դահր Շուշում» Հ. Առաքելեանի
 26. «Մինը այսպէս, մինը այնպէս» Բաֆֆիի
 27. «Պարսկական գրոյցներ» Վ. Փափագեանի
 28. «Վերջին վերջեր» Լէօի
 29. «Մրցումն հասարակութեան հետ» շուեղերէնից, փո-
 խադ. Ս. Հախումեանի
 30. «Դե» (պատկերազարդ) Լերմոնտովի
 31. «Демонъ» (иллюстр.) Лермонтова
 32. «Վիւէլէմ Տէլլ» (պատկերազարդ)
 33. «Գինեգարծի պղնձիկը»
 34. «Կնոջ կոչումը» Յ. Ղարապետեանի
 35. «Ֆէրօ»
 36. «Սկիզբն երկանց» Պերճ Պուշեանցի
 37. «Փրիդօլին», Շիլլերի, թարգմ. Բաֆֆիի
 38. «Նրա մայրը» }
 39. «Կոլումբոս» } թարգմ. Ն. Տ.-Աւետիքեանի
 40. «Նւանդելինա» }
 41. «Նուէր հայ ուսուցիչներին» Ղ. Աղայեանի
 42. «Մերենցի կենսագր. և յաւել.» Ա. Եղեկեանի
 43. «Թշուառ Լիզա» Կարամզինի
 44. «Հուզեցողներ» Լիրիատո
 45. «Սաֆօ» Ա. Նազար-բէգի

Գ Ե Ղ Ա Ն Ի Կ Ա Ղ Ա Ն Ո Վ

(Աղբիւրի մատենադարան)

46. «Եղիղի Մկրտչեան տունը» Պերճ Պուշեանցի
 47. «Մեկանիա» Շիրվանզադէի
 48. «Բաճառ, և պատմուածք» Յովհ. Թումանեանցի

49. «Հայ բոջաների վրաներում և Արծուի բունը» Վ.
 Փափագեանի
 50. «Նեղ օրերից մէկը» Նար-Վոսի
 51. «Նէյլս Զաւար» Ղ. Տէր-Նրիգորեանի

III. Պ Ի Է Ա Ն Ե Ր

1. «Ճըպատրդ քոյսա կտրի», Ղալի աղաթներան պատկեր-
 ներ Տիգոյի
 2. «Խոչընդոտ» (Z. Obstacle) Ալֆոնս Դոդէի
 3. «Խօլերա» Յար. Թումանեանցի
 4. «Պատուաւորներից մէկը» Բրակկոյի
 5. «Գուաճանութիւն» Իշխ. Ա. Սմբատովի
 6. «Գործը գործ է պահանջում» Միքէլի

IV. Օրացոյց և արմանախ

1. Օրացոյց 1890 թ. փոքրագիր
 2. » » պատկերազարդ
 3. » 1891 թ. կանանց համար
 4. » » ծոցի
 5. » » գրպանի մեծագիր
 6. » » տախտակ
 7. » » պատի, հատուածակաճ
 8. » 1899 թ. արմանախ

V. Ա Լ Ր Օ Ա Ն Ե Ր

1. Կովկասեան տիպեր
 2. Կովկասեան անօթներ
 3. Գեղարուեստական արքօմ
 4. Յիսուսեան գալլերէյ
 5. Ալքօմ-արմանախ
 6. Ալքօմ Աղբիւրի

VI. Պատկերներ նենապակու վրայ

1. Վեհափառ Խրիմեան Հայրիկ
2. Սրբազան Իգմիրիեան
3. Գրիգոր Արծրունի

VII. Պատկերներ

1. Պարոյր Հայկազն և Մովսէս Խորենացի
2. Ս. Սահակ { զինագրութիւն
3. Ս. Մեսրոպ { զինագրութիւն
4. Տրդատի մկրտութիւնը
5. Արտաշէս Թագաւորի մուտքը Հոռոմ
6. Վարդանանց պատերազմը (Ղևոնդեանք)
7. Ս. Սահակ { ֆոտո-գրաւիւր
8. Ս. Մեսրոպ { ֆոտո-գրաւիւր

VIII. Կայսերական տուն

1. Կայսր Ալէքսանդր III
2. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչ
3. Այրի Թագուհի Մարիա Ֆէօդորովնա
4. Թագաժառանգ Գեորգի Ալէքսանդրովիչ
5. Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչ
6. Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդորովնա

IX. Մատենագիրներ-հրատարակախօսներ

1. Գրիգոր Արծրունի
2. Մերենց
3. Բաֆֆի
4. Ռաֆայէլ Պատկանեան
5. Միքայէլ Նալբանդեան

6. Ս. Շահաղի
7. Պերճ Պառչեան
8. Ղ. Աղայեան
9. Աղամեան

X. Հոգեւորականներ

1. Խրիմեան Հայրիկ մեծադիր
2. » » փոքրադիր
3. Հայրիկը Օշականում
4. Ներսէս V
5. Արիստակէս արքեպ. Սեդրակեան
6. Տեղակալ Երեմիա արքեպ.
7. Սրբազան Իգմիրիեան

XI. Սրբազան վայր

1. Ս. Եջմիածին (մեծադիր ֆոտո-գրաւիւր)

XII. Կրօնական

1. Մոզերի երկրպագութիւնը
2. Յիսուս-Տիրամայր
3. Յիսուս Խաչակիր
4. Մադոննա Ռաֆայէլի
5. { Հրեշտակներ
6. { Անառակ որդի
7. {

XIII. Յունական կեանքից

(Խրոժօ-օլէօգրաֆիա)

1. Արչալոյս
2. Էֆիզեներա
3. Անտիգոնա և Էդիպ
4. Անտիգոնա և Իամէնա

XIV. Գ ե ղ ա ն ի

(Օլէօգրաֆիա)

1. Զմեռ
2. Մայրիկի ննջարանում
3. Բերկրանք
4. Հարէմի աղջիկը սուկի շղթաներում
5. Յուրա է
6. Պարոզ Երզնուհի

XV. Թ ա փ ա ն ց ի կ

1. Ռոմէօ և Զուլիէթ
2. Իսպանական անուրջ

XVI. Բաց նամակներ

1. Ս. Էջմիածին
2. Ստեփանոս Նազարեան
3. Գրիգոր Արծրունու գերեզմանը
4. Ագամեան-Համլէտ
5. Երզնուհի Պապայեան

Ա Ղ Բ Ի Ի Ր Ը

25 ՏԱՐՈՒՄ

1881 թ. վերջերին Տիգրան Նազարեանը, տեղափոխուելով Շուշուց, հաստատուեց Քիֆլիսում: Շուշում ահա՛ չհրատարակական գործը շարունակելու համար, նոյն թուի նոյեմբերի 17-ին Մ. Վարդանեանի տպարանին յանձնեց շարելու Կ. Կ. Մելիք-Շահնազարեանի Ղըլըցի կրճանոց պընը փեռակը: Գիրքը պատրաստ էր մինչև նոր տարի, սակայն գրաքննական ատեանն իրաւունք չտուեց տարածելու, համարելով Տ. Նազարեանի գործերը պարբերական հրատարակութիւն, որի համար, օրէնքի համաձայն, պէտք էր առանձին իրաւունք ստանալ:

Առանց այն էլ Տ. Նազարեանը վաղուց տենչում էր հրատարակել պատկերազարդ մի հանդէս, և ահա գրաքննական ատեանի յարուցած արգելքը մի խթան եղաւ նրան Աղբիւրի հրատարակութեան թոյլտուութիւնը խընդրելու փոխարքայ Մ. Ի. Միխայիլ Նիկոլայեիչից:

Թոյլտուութիւնը չուչացաւ, որովհետեւ այս գործում նպաստեցին բարոն Նիկոլայի և գրաքննիչ Մելիք Մեհրաբեանի բարի ցուցումները, և ահա 1883 թ. յունուարին լոյս տեսաւ Աղբիւրի առաջին համարը: Աղբիւրի հրատարակութեան գործը սկսելիս Տ. Նազարեանի ամենամերձաւոր խորհրդակիցներն էին Նատալիա Տէր-Մարկոսեան և Գաբրիէլ Միրզոյեան: Առաջինը յայտնի էր որպէս մանկական թարգմանական գրականութեան հիմնադիր, երկրորդը — որպէս մանկավարժ և մանկական գրականութեան սիրահար: Այդ ժամանակ Նատալիա Տէր-Մարկոսեանը և Գաբրիէլ Միրզոյեանը նշանուած էին իրար հետ:

Պատկերակց հազիւ մի քանի շաբաթ միայն անցած՝ վախճանուեց Նատալիան 1882 թ. սեպտ. 22-ին: Այդ դըժբաղդութիւնն առիթ եղաւ Տիգրան Նազարեանի համար աւելի մտերմանալու սգաւոր Գարբիէլ Միրզոյեանի հետ: Նրանց խօսք ու զրոյցը շարունակ հրատարակուելիք Աղբիւրն էր, որ մի տեսակ աւանդ էր թողել նրանց հանգուցեալ Նատալիան:

Այդ ժամանակ թիֆլիսումն էր գտնուում ուսու մանկական գրող Ն. Ա. Սալաւեօվ-Նեամելով: Սա ժամանակաւորապէս տեղափոխուած էր թիֆլիս Կովկասի հետ անձամբ ծանօթանալու համար և այստեղից աշխատակցում էլ մայրաքաղաքի ուսու մանկական ամսագիրներին. միաժամանակ ուսուցչութիւն էր անում թիֆլիսի Միքայէլեան արհեստագիտական դպրոցում, որտեղ այդ ժամանակ ուսուցիչ էր նաև Գարբիէլ Միրզոյեանը:

Սալաւեօվ Նեամելովը Աղբիւրի ոչ միայն հիմնական գրական ոյժը դարձաւ առաջին տարին, այլ և մի տեսակ դեկավար-խորհրդատուն և պատրաստակամ բարեկամը: Մրա շնորհիւ կապ հաստատուեց Պետերբուրգում հազիւ մի տարի առաջ սկսուած ուսու մանկական ամսագիրը РОДНИКЪ-ի խմբագրութեան, յայտնի նկարիչ Կարագինի և այլոց հետ: Աղբիւրի չապկի նկարը պատկանում է Կարագինի վրձինին:

Տ. Նազարեանն իր Աղբիւրի շուրջն էր հաւաքել անձնուէր գործիչները մի ընտիր խումբ: Գա մի տեսակ միջազգային խումբ էր. բացի հայերից, կային այդ խմբի մէջ մի ուսու (Սալաւեօվ-Նեամելով), մի վրացի (Ղուլաձէ) և մի թուրք (Սուլթանով) մանկավարժ:

Սալաւեօվ-Նեամելովն աշխատում էր, որ Աղբիւրի հետ միաժամանակ հրատարակուեն մանկական ամսագիրներ նաև վրացերէն և թուրքերէն: Վրացերէն ամսագիրը Աղբիւրից մի փոքր ուշ սկսեց հրատարակուել Ղուլաձէի

խմբագրութեամբ Նոբարի (Երեխայրիք) անունով, որը, սակայն, կարճ կեանք ունեցաւ, իսկ թուրքերէնը, որի անունը պիտի լինէր Գարգաւ (Եղբայր), մինչև օրս էլ մնաց:

Աղբիւրի հէնց առաջին համարից աշխատակցում էին մեր գրականութեան կորիֆէյններ Ղազարոս Ազալեան և Բաֆֆի: Առաջին տարուայ հետեւեալ համարներում երևան են գալիս Ն. Ա. Սալաւեօվ-Նեամելով, Կ. Կ. Մելիք-Շահնազարեան, Նիկ. Տ.-Աւետիբեան, Լ. Մելիք-Ազամեան, Վ. Փափագեան, Ս. Քամալեան, Գ. Բարխուդարեան, Սրինդ, Նիկիէ Մազաթեան, Խոջամիրեան և այլք: Սալաւեօվ-Նեամելովի յօդուածները, որոնք գրուած էին լինում յատկապէս Աղբիւրի համար, թարգմանում էին նոյն իսկ Ազալեան, Բաֆֆի, Կ. Կ. Մելիք-Շահնազարեան, Ա. Մատուրեան, Լ. Մելիք-Ազամեան և ուրիշները: Գարբիէլ Միրզոյեանը գրում էր բնագիտական յօդուածներ Գ. Մ. և Նաւակե՛ն՝ Դարօ ստորագրութեամբ: Տ. Նազարեանը չէր ստորագրում իր յօդուածներին: Նրկորդ տարուայ համարներում միայն երևան են գալիս Տ. Նազարեանի յօդուածները Զարու՛ն ստորագրութեամբ: Այս անունով էլ (իր մօր անունով) Տ. Նազարեանը շարունակում է մինչև այժմ ստորագրել Աղբիւրի մէջ գետեղած իր մանկական պատմուածքները:

Աղբիւրի երևումը աղէտաբեր եղաւ մանկավարժական Վարժարան ամսագրի համար, որ այդ ժամանակ հրատարակում էր Գայիանեան դպրոցի տեսուչ Նիկողայոս Խոսրովեան: Աղբիւրի սկսուած հէնց առաջին տարին, 1883 թ., ժամանակաւորապէս գազարեց Վարժարանը, չնայելով որ Աղբիւրը գուտ մանկավարժական-մասնագիտական ամսագիր չէր, ուրեմն և չէր կարող Վարժարանի մրցակիցը լինել: 1884 թ. Ն. Խոսրովեանը, պատրաստուելով վերսկսել իր Վարժարանը, առաջարկում է Տ. Նազարեանին

չհրատարակել Աղբիւրի յաւելուած մանկավարժական բա-
ժինը և փոխարէնը խոստանում է ինքն ևս չհրատարա-
կել Վարժարանի յաւելուած մանկական բաժինը: Այդ
առաջարկը չի ընդունւում: Սակայն, երբ վերսկսւում է
Վարժարանը, էլ չկայ նրա մանկական բաժին յաւելուածը:
Կարճ ժամանակից յետոյ Վարժարանը փակւում է առ-
միշտ, բաւարար չափով բաժանորդներ չունենալու պատ-
ճառով:

Մինչդեռ մօտաւորապէս 30 բաժանորդով սկսուած
Աղբիւր տարուա: վերջն ունէր արդէն 800-ից աւելի
բաժանորդ և ուղարկւում էր 109 հայաբնակ վայրեր:

Աղբիւրի առաջին համարը լոյս տեսաւ Մովսէս
Վարդանեանի տպարանում և այնքան վատ էր տպա-
գրուած, որ խմբագիրը ստիպուած եղաւ նոյն համարն
արտատպել Յով. Մարտիրոսեանի ճոխ տպարանում և
նորից ուղարկել բոլոր բաժանորդներին:

Տ. Նազարեանի հոգացողութեան գլխաւոր առար-
կաներից մէկն էլ այն է եղել չէնց սկզբից, որ տխրու-
թեան տեսակէտից հնար եղածին չափ ճոխ հրատարա-
կութիւններ տայ մանուկների մէջ գեղեցիկ ճաշակը զար-
գացնելու համար:

80-ական թուականներին Թիֆլիսում չկային իլլուս-
տրատորներ և փորագրիչներ. չկար այժմեան ցինկօգրա-
ֆիան, որ մի քանի ժամում, կոպէկներ ծախսելով, կա-
րելի է լինում այս ու այն պատկերի կլիշէն պատրաստել
տալ: Ճիշտ է, կար Աղբիւրի շուրջը հաւաքուած խմբի-
մէջ մի ուրիշ վրացի—Տատիշիլի (Փիզարո)—որ թէե
չնորճալի և այն ժամանակուայ համար նոյն իսկ շատ
գեղեցիկ կերպով փորագրում էր փայտի վրայ զանազան
ծաղկատառեր և օրնամենտներ, բայց նիւթերին յարմար-
ուող պատկերները բաւարար չէին և թանգ էին նստում
Իսկ Պետերբուրգ և արասասման ուղարկուող պատ-

ուէրները մեծաքանակ չլինելու պատճառով ընդունում
էին ծանր պայմաններով և ամիսներով ուշացում:

Աղբիւրի աշխատակից Վ. Վ. Մելիք-Շահնազարեանը
1883 թ. գնում է Մոնպելիէ (Ֆրանսիա) գիւղատնտեսու-
թիւն սովորելու. նրան յանձնարարւում է—երևակայեցէք
—գիւղատնտեսութեան այդ կենտրոնից նկարներ ուղար-
կել Աղբիւրի պրեմիայի համար: Կոստանդինը կատարում
է այդ յանձնարարութիւնը և ուղարկում է օլէօգրաֆիա-
կան մի քանի փորագրի պատկերներ: Խմբագրութիւնն
ընտրում է դրանցից Եղջեռուներ պատկերը Աղբիւրի
նախկին մի երեսի մեծութեամբ: Բաժանորդները հաւա-
նում են և նրանց քանակի չափ ապսպրուած պատկեր-
ները սպառւում են: Գրւում են նոր բաժանորդներ,
որոնց բաւարարութիւն է տրւում նոյն չափի տարբեր
կենդանիների պատկերներով:

Ռուսաց մանկական երկու յայտնի թերթերի՝ РОД-
НИКЪ-ի և Игрушечка-ի խմբագրութիւնները յայտ-
նում են իրենց պատրաստակամութիւնը ձրիապէս կա-
տարել Աղբիւրի խմբագրութեան յանձնարարութիւննե-
րը՝ նկարներ փորագրել տալու, ձեռք բերելու, ռուս
մանկական յայտնի գրողների հետ բանակցելու և այլն:

Կեանքն ետում էր Աղբիւրի շուրջը: Գաւառներից
յօդուածները թափւում էին հեղեղի սլէս: Նորանոր ոյ-
ժեր էին խմբուում: Այդ ոյժերի մէջ մենք առաջին ան-
գամ հանդիպում ենք անունների, որո՞ք յետագայում ու-
րոշ հռչակ ստացան մեր գրականութեան մէջ: Աշխատա-
կիցները մէջ մի եզակի երևոյթ էր Սալաւեօվ Նեսամելովը:
Այդ ռուս մարդը, որ հայերէն ոչ կարդալ, ոչ գրել գիտէր,
հոգով-սրտով կապուած էր Աղբիւրին, գրում էր յատկապէս
Աղբիւրի համար, և նրա գրածները Աղբիւրում լոյս տես-
նելուց յետոյ միայն տպագրւում էին ռուսաց մանկական
թերթերում և ապա տպագրւում առանձին ժողովածու-

ների մէջ: Նա անքուն գիշերներ էր լուսացնում տպա-
քանում խմբագրութեան միւս անդամների հետ միասին,
և հարկ կայ արդեօք ասելու, որ աշխատակցում էր բո-
լորովին ձրի: 1884 թ. յունիսի սկիզբներին նա հրատեղա-
տուեց Թիֆլիսին և մեկնեց Պետերբուրգ: Աղբիւրի դա-
յնակը (այսպէս էին անուանում խմբագրութեան անդամ-
ները Սայաւեօվ-Նեսմեյովին) վախճանուեց Մոսկուայում
1902 թ.:

1884 թ. Աղբիւրի մէջ հրատարակուեց Բաֆֆելի
Պարոյր Հայկազն պատմական պատկերը: Նոյն թուակա-
նին Աղբիւրի խոստացուած պրեմիան էր Պարոյր Հայկազն
եւ Մովսէս Խոբեմացի պատկերը, որ նկարել էր Գ. Բա-
չինջազեանը: Սակայն այդ պատկերը Վիէննում տպագրու-
ուեց ոչ աջող, և խմբագրութիւնը չընդունեց, այլ դրա
փոխարէն ուղարկեց բաժանորդներին Ձմեռ օլէօգրա-
ֆիական մի պատկեր և Պուշկինի Ոսկէ ձկնիկ հէքիաթը
Ղ. Աղայեանի թարգմանութեամբ, որ լոյս տեսաւ երեք
տերիայով, I-ը իբրև երկրորդ պրեմիա, II-ը ընտիր թըղ-
թի վրայ վաճառելու համար և III-ը (500 օրինակ) խըմ-
բագրութիւնն ուղարկեց Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամա-
խու, Երևանի, Բեսսարաբիայի և Հաշտարխանի թեմական
տեսուչներին իրենց թեմերի դպրոցների չքաւոր հայ ա-
շակերտ-աշակերտուհիներին ձրիաբար բաժանելու համար:

Խմբագրութեան մէջ կենտրոնական դեր էր խա-
ղում Գարրիէլ Միրզոյեանը կամ Գարժն: Տիրբան Նա-
զարեանը վարում էր զուտ հրատարակչական գործը, որի
մէջ նա հայերիս մէջ թերևս նմանը չունի. իսկ խմբա-
գրական գործը լիովին վստահացել էր Գարժին: Գարժն
էր ընտրում տպագրուելիք նիւթերը, նա էր վարում
Աղբիւրի Բ. բաժինը, առհասարակ նա էր ուղղութիւն
տալիս ամսագրին, և այդ գործում զարմանալի օէր, և
աւանդ և հոտառութիւն էր ցոյց տալիս: Սակայն նա ու-

նէր բնաւորութեան մի քանի թերութիւններ, որոնց
պատճառով նրա և Տ. Նազարեանի միջև եղած մտերմա-
կան յարաբերութիւնները հետզհետէ լարուեցին և վերջի
վերջոյ միանգամայն կտրուեցին: Գարժի անբարեկա-
մութիւնն Աղբիւրի մէջ սուեց 2 և կէս տարի, որից յետոյ
1885 թ. ամառը, նա թողեց հեռացաւ այն համոզուեալ,
որ առանց իրեն Աղբիւրը կը ցամաքի: Հեռանալուց յե-
տոյ նա լրագիրներում յայտարարեց, որ ինքը պիտի հրա-
տարակէ մանկական մի ամսագիր Նաւակ անունով: Սա-
կայն Նաւակը երբէք էլ լոյս չտեսաւ: Իսկ Աղբիւրը,
բարեբաղդաբար, չցամաքեց, այլ, ընդհակառակը, այն-
քան յորդացաւ, որ նրա բաժանորդների թիւը 1886 թ.
հասաւ 1060 ի, մինչդեռ Գարժի ժամանակ, 1885 թ-
այդ թիւը հազիւ 700 էր:

Այդ միջոցներին խմբագրութեան մէջ աշխատում
էին երկու ժրաջան աշխատակիցներ՝ Լևոն Մելիք-Աղամե-
եան և Նիկ. Տէր-Աւետիքեան: Լևոն Մելիք-Աղամեանը
կատարում էր սրբագրչի համեատ պաշտօնը, բայց իսկա-
պէս նրա և Նիկ. Տէր-Աւետիքեանի վրայ էր ծանրացած
տպագրուելիք գրեթէ բոլոր նիւթերը չտկելու և դժուա-
րին թարգմանութիւնները կատարելու սրտանաչ աշխա-
տանքը: Սթէ Աղբիւրի մէջ հանդիպում ենք թարգմանու-
թիւնների, որոնք շատ անգամ լաւ են բնագրից և կա-
տարելապէս հայացրած, — գրունք պատկանում են Լևոն
Մելիք-Աղամեանի գրչին: Մինչև օրս էլ նա գործում է
մեր գրականութեան մէջ նոյն ուղղութեամբ:

1886 թուականից Աղբիւրը, արդէն խոր արմատներ
բռնած, սկսում է աւելի ու աւելի ընդարձակ իրաւեր
գրաւել: Այդ թուականի № 1-ը սպառուում է, չնայելով
որ բաժանորդների թուից 300 օրինակ աւելի էր տըպ-
ուած, և խմբագրութիւնը նոր բաժանորդ գրուողներին
առաջարկում է սպառուած №-ի փոխարէն ընտրել 50 կ.

գրքեր Աղբիւրի հրատարակութիւններէց: Յիշեալ թուականին խմբագրութիւնը պրեմիա է տալիս Փրիսթօն դիւցազն պատկերազարդ գիրքը և դարձեալ Ձմեռ անուան տակ օլէօգրաֆիական մեծագիր մի ուրիշ սիրուն պատկեր:

86 թուականի աշոգութիւնից ոգևորուած՝ խմբագիրը 87 թ. հրաւիրում է մշտապէս աշխատակցելու Ղ. Աղայեանին, Ս. Մանգիւնեանին, Փ. Վարդանեանին, Ս. քահ. Բէկնազարեանին, որոնք եռանդուն մասնակցութիւն են ունենում և Աղբիւրի Բ. բաժնում: Այդ շրջանում Աղբիւրի հոգին կազմում է Ղ. Աղայեանը և այդ շրջանումն է տալիս նա իր մանկական ընտիր գրուածքները—Արեգնազանք, Տոբ Անգեղը և այլն—միևնոյն ժամանակ Բ. բաժնում գետեղելով մատենախօսական, պոլեմիքական և լեզուագիտական յօդուածներ: Նոյն այս շրջանումն էր, որ Աղայեանը յարոյց էի նշանուոր խնդիրը, և առաջին անգամ այդ ուղղագրութեամբ լոյս տեսաւ Աղբիւրի 1888 թ. գեկտեմբերի №-ը:

Վերոյիշեալ մշտական և դրսի աշխատակիցներն այնքան առատ ինքնուրոյն նիւթ էին մատակարարում, որ խմբագրութիւնը ստիպուած եղաւ 1887 թ. յայտարարելու, թէ այլևս չի ընդունելու թարգմանական յօդուածներ: Աղբիւր սկսում է լոյս տեսնել, փոխանակ 2—3-ի, 3—4 տպագրական թերթ. Բ. բաժնը հրատարակում է ամեն ամիս և առաջուանից աւելի ստուար ծաւայով: Խմբագիրն ամառը գնում է Պետերբուրգ նշանուոր նկարիչներին և փորագրիչներին հետ պայմանաւորուելու և հոկտ. №-ը լոյս է տեսնում ժամանակաւոր խմբագիր Ղ. Աղայեանի ստորագրութեամբ: Աշակերտներին Աղբիւրը պրեմիաներով հանգերձ ուղարկում է 3 րուբլով, փոխանակ 5-ի: Զատական №-ում տպուած ակրուսի կարգացողին ընծայ է տրոււմ 25 ր. գրքեր:

Այս տարուայ պրեմիաներն են Սեւանայ լիճը՝ նկար Քաչինջադեանի և Սահակ եւ Մեսրոպ վիմագիր պատկերները՝ արտանկարած Ն. Պարսամեանի և տպագրուած Թիֆլիսում:

Յաջորդ 88 թուականն աւելի աջող տարի է հանդիսանում: Աղբիւրի № 1-ը սպառուում է արդէն յունուարի կէսին, և խմբագրութիւնը յայտարարում է, որ նոր բաժանորդները կը ստանան 50 կ. գրքեր կամ հրատարակուելիք «Առսեւ եւ Մեմախեմ» գրքից մի օրինակ № 1 ի փոխարէն: № 2-ը տպագրուում է 1500 օրինակ և մարտին սպառուում է այդ №-ն էլ: № 3-ը տպագրուում է արդէն 1720 օրինակ: Խմբագրութիւնը Բաֆֆիի թաղման ժամանակ (ապրիլին) գերեզմանատանը ձրի բաժանեց հանգուցեալ վիպասանի պատկերը 200 հատ: Խմբագիրը բարդ ունեցաւ Աղբիւրի № 10-ը (հոկտեմբեր) մատուցանելու Թագաթառանգ (այժմ Թագաւոր Կայսր) Նիկոլայ Ալէքսանդրովիչին, որ իր հօր՝ Ալէքսանդր III-ի հետ հիւր էր Թիֆլիսում, և ստացաւ բարձրագոյն շնորհակալութիւն:

Զանազան անձեր բաժանորդ էին գրուում Աղբիւրին իրենց արգականների և բարեկամների երեխանց համար, առանց յայտնելու իրենց ով լինելը: Այդ բանը հարկաւ մեծ հետաքրքրութիւն էր շարժում ստացողների մէջ, որոնք և բնականաբար, ուղում էին իմանալ, թէ ով է նուիրարեւորը. բայց խմբագրութիւնը կամ ինքն էլ չէր իմանում, կամ իմանալով իսկ չէր յայտնում նուիրարեւորի անունը, որովհետև վերջինս այդպէս էր լինում պատուիրած: Նոյն թուականին, խմբագրութեան կոչի համաձայն, բաժանորդները 20—25 կ. ուղարկելով խմբագրութեանը՝ միջոց են տալիս մի հայ չքաւոր ուսանողի արտասահմանում աւարտելու իր ուսումը: Այս բոլորը ցոյց է տալիս, թէ որ աստիճան սէր ու համակրտեք էր վայելում Աղբիւրն իր ընթերցողներին շրջանում: Գործի ան-

օրինակ անդուլթիւնից խրախուսուած, խմբագիրը Գոլո-
վինսկի սլոուսկեակի վրայ բաց արեց ուսպահան թղթի
վաճառատուն: Այդ թուականին վիճակ ձգուեց բաժա-
նորդների մէջ Բաշինջադեանի Աղքատաբայ ծովը նկարը:
Պրեմիաներն էին Մոզերի երկրպագութիւնը օլեօքրաֆիա-
կան գեղեցիկ պատկերը և մի գլխք ներսպա անունով
թարգմ. իտալերէնից Ա. Մ. Ն.: Մոզերի երկրպագու-
քիւնը մանաւանդ մեծապէս նպաստեց Աղբիւրի տարած-
ման: Այդ պատկերն այնքան հաւանութիւն գտաւ, որ
այդ տարի մի քանի օտարագրի բաժանորդներ էլ ունե-
ցաւ Աղբիւրը, որովհետեւ այդ պրեմիան շուկ չէր վաճառ-
ուում:

Հետաքրքրական է այս պրեմիայի պատմութիւնը:
Գրաքննական ատեանը հայ ամսաթերթի խմբագրութիւ-
նից պահանջում էր Արաստանի էքզարխի թոյլտուութիւնը
Մոզերի երկրպագութիւնը տարածելու համար: Խմբագ-
րութիւնը հարկադրուած դիմեց էքզարխին: Արջինս
մերժեց թոյլատրել այն պատճառաբանութեամբ, թէ
պատկերի մէջ Աստուածամայրը շատ գեղեցիկ է, որով
կարող է սրբապիղծ զգացումներ յարուցանել դիտողի
մէջ: Այ մի բացատրութիւն—ոչ Ռաֆայէլի Մադոննան,
ոչ ուրիշ օրինակներ չօգնեցին սրբազան էքզարխին հա-
մազելու համար, որ իր պատճառաբանութիւնը շատ տար-
օրինակ է: Խմբագրի կողմից բարեկամաբար միջնորդի
գեր էր կատարում մաքսատան վարչութեան անգամ իշխ-
ձաճառածէ, և այս միջնորդութիւնն էլ ասպարդիւն ան-
ցաւ. էքզարխը մնաց անդրդուելի: Խմբագրութիւնը ճա-
բահատեալ ընդհատեց բանակցութիւնները, և պատկեր-
ները մնացին մաքսատանն ընկած, մինչև որ մի օրինակ
ուղարկուեց էջմիածին, որտեղ Աստուածամօր պատկերի
մէջ հակալիօնական զգացումներ յարուցանող ոչինչ չը
գտան, համաձայնութիւն տուին տարածելու և այդ հի-

ման վրայ էլ գրաքնն. ատեանը վերջ ի վերջոյ թոյլատրեց
Մոզերի երկրպագութիւնը:

Յաջորդ 1889 տարին շատ մեծ հաւանութիւն գտաւ
Արեւայի Արարատեան անուան տակ մի մեծադիր օլեօքրա-
ֆիա՝ հեռուոր նմանութիւն Ոգի Հայաստանի պատկերի:
Այդ օլեօքրաֆիան, ինչպէս և Մոզերի երկրպագութիւնը,
ապրիլից սկսուեց վաճառուել հատը 3 ռ.: Այնուհետեւ
հոկտեմբերին վիճակ ձգուեց բաժանորդների մէջ Բաշին-
ջադեանի Արարատ նկարը: Աղբիւրը № 2-ից սկսած տես-
նում ենք տպագրուած կաթնագոյն չքեղ թղթի վրայ և
պատկերներն էլ աւելի լաւացրած: Այդ տարին Աղբիւրի
բաժանորդների թիւն այնքան աւելացաւ, որ խմբագրու-
թեան անդամ հրաւիրուեց Ղ. Աղայեանը: Սա աւելի մեծ
եռանդով առաջ տարաւ իր աշխատակցութիւնը: Աղայ-
եանի մի յօդուածը, սակայն, բաւական վնասեց Աղբիւրի
տարածման, հակառակ, ի հարկէ, յօդուածագրի ցանկու-
թեան: Այդ տարուայ փետրուարի № ի Բ. բաժնում լոյս
տեսաւ Ղ. Աղայեանի մի մատենախօսութիւնը նոր ըս-
կուած Մուրն ամսագրի մասին. այդ յօդուածի մէջ մեր
եկեղեցական երգեցողութեան մասին կային այսպիսի
տողեր «...Սեր եկեղեցում թոյլ է տրուում քմահանոյ
քղաւոց ու զոռոց, բայց թոյլ չի տրուում երկնային
ներդաշնակութիւն ունեցող երգէհոնի նուագելը»: Այս
անմեղ, բայց և շատ իրաւացի նկատուութիւնը դայրաց-
րել էր Թիֆլիսի քահանաներից ոմանց, որոնք զոռոց
բառը վիրաւորական համարելով եկեղեցական դասի հա-
մար՝ բողոք էին ներկայացրել այն ժամանակուայ թեմ.
առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի միջոցով Մակար
կաթողիկոսին: Բողոքի հետեւանքն այն եղաւ, որ մի կի-
սապաշտօնական շրջաբերականով առաջարկուեց մեր
գլխորդներին և եկեղեցականներին չտանալ Աղբիւրը և
արդեւ լինել նրա տարածման: Պէտք է աւելացնել, որ

այս խնդրում հողերականների ետևը թագնուած՝ գործում էին Աղբիւրի թշնամիները, որոնք, նրա ունեցած աջողութեանը նախանձելով, առիթը շատ յարմար էին գրտել նրան վնասելու:

Սակայն Տ. Նազարեանը ոչ միայն չընկճուեց այդ հարածանքներից, այլ և ինքը մղուեց նրանց դէմ: Այդ ժամանակները նա արդէն ծախել էր Շուշում իր տունը և բուսականաչափ գումար ունէր իր հրատարակչական գործն ընդարձակելու համար: 1889 թ. նա ստացաւ Տարազի թոյլտուութիւնը Աղբիւրի յաւելուածի անուան տակ: Նոյն թուականին ժիւլ Սիմոնից հրաւէր ստանալով գրնաց Պարիզ համաշխարհային ցուցահանդէսի առիթով այնտեղ կայանալիք գրականագէտների և լրագրողների ժողովին մասնակցելու: Օգտուելով առիթից, Պարիզում ձեռք բերեց ցուցահանդէսում առաջին մրցանակը ստացած Մարինոնու արագատիպ մեքենան և հետն էլ Վենետիկի, Վիէննի, Զմիւռնիայի և Պոլսի տառեր, Թիֆլիսում սեպհական տպարան բանալու համար:

Եւ ահա 1890 թ. Աղբիւրը և յաւելուած Տարազը լոյս են տեսնում սեպհական Աբօր տպարանում յատուկ ապսպրուած ընտիր թղթի վրայ, այն ժամանակները ռուսահայերիս մէջ չտեսնուած չըբզ հրատարակութեամբ: Բ. բաժինը, որ մինչև այժմ լոյս էր տեսնում Աղբիւրին կից, յունուարից սկսում է լոյս տեսնել առանձին շապկով և բաղկացած 2 թերթից: Ամսի 10-ին ուղարկուում էր Աղբիւրը, 20-ին Տարազը և 30 ին Բ. բաժինը: Այդ տարուայ պրեմիան էր Յիսուս խաչակիր ընտիր մեծագիր գրաւիւրը, պատրաստուած Պարիզում, ուր հատը վաճառուում էր 10 ֆր.: Այդ պատկերից խմբագրութիւնը պատրաստել էր տուել 10,000 հատ, որից 3000-ը բերել էր Թիֆլիս և 7000-ը թողել Պարիզ. Պարիզում թողածը բոլորը սպառուեց, իսկ Թիֆլիս բերածի մեծ մասը մնում

է մինչև օրս էլ: Այդ տարի խմբագրութիւնը տուեց և մի ուրիշ պրեմիա—պատի տախտակ-օրացոյց 1891 թ. համար: Բացի դրանից, սեպտ. 30-ին խմբագրատանը բաժանորդների մէջ վիճակ ձգուեցին երեք պատկերներ՝ 1) Յովսէփ գեղեցկի վանատումը, 2) Յիսուս Սինա լեռան վրայ աղօթելիս, 3) Մովսէս մարգարէի տաք պատգամ ստանալը, 100 ը. գրքեր ընթերցանութեան համար եւ 50 ը. սեղանի զարդ: Եւ այդ տարին Աղբիւր-Տարազի բաժանորդազինն էր բոլոր պրեմիաներով ընդամենը 5 ը.: Սակայն չնայելով այս բոլորին, բաժանորդների թիւը պակասում է: Աղբիւրի Բ. բաժինը մարտ ախից այլ ևս առանձին չի հրատարակուում: Այդ թուականին տօնուեց Գր. Արծրունու 25-ամեայ յօբելեանը, որի աջողութեան համար եռանդով պրոպագանդ մղեց Աղբիւր-Տարազը:

Չնայելով այդ անաջողութեանը, Տ. Նազարեանը կանգ չառաւ մեծամեծ ծախքերի առաջ և յաջորդ 1891 թուականին Տարազը սկսեց հրատարակել իբրև շաբաթաթերթ, Աղբիւրը շարունակելով իր կարգին: Ա. Աղայեանը դեռևս նախորդ տարուայ ամառն անց էր կացրել գիւղում, իսկ ձմեռը գնացել էր Մոսկուա Արիստակէս եպիսկոպոսի Ամուսնական խնդիրներ գիրքը սրբագրելու, այնպէս որ նա իրապէս 1891 թ.-ից դադարել էր Աղբիւր-Տարազին աշխատակցելուց: Այդ թուականին խմբագիրը արտասահման գնալով, ամառը ժամ. խմբագրի պաշտօնը ստանձնում է բժշկ. Գ. Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի). խմբագրատանը մնում են Արչակ Մեհրաբեան (Սրինգ), Սիմ. Հախումեան և Վ.ր. Փափագեան: Այս երեքն էլ ջերմ կերպով աշխատակցում էին Աղբիւր-Տարազին, իսկ Սրինգն առանձնապէս հոգով նուիրուած էր Աղբիւրին: Այդ տարուայ պրեմիան էր Անառակ որդին: Նոյն թուին Աղբիւրի հրատարակութեամբ լոյս տեսան 5

տեսակ օրացույցներ—*Ճոցի, զրպանի, սեղանի, պատի եւ կանանց*: Կեկտեմբերին լոյս տեսաւ Աղբիւր *Ճնողներ* ի կ զաւտիարակների համար, Ա. հատոր, 42 երես Աղբիւրի դիրքով: Եյս հատորը, սակայն, շարունակութիւն չունեցաւ:

1892 և 1893 թուականները բաւական աղէտաբեր եղան այն գեղեցիկ դործի համար, որ մինչ այդ առաջ էր տարել և հետզհետէ ծաղկեցրել Տ. Նազարեանն իր անհատական ոյժերով: Մի կողմից Աղբիւր իր մեծածախս պրեմիաներով, միւս կողմից Տարագր, Կրթորդ կողմից **ԱՌՈՒՇԵՆ**-ը, չորրորդ կողմից Աբօր տպարանը, հինգերորդ կողմից սեպհական թղթի վաճառանոցը, վեցերորդ կողմից անհամար կլիչէները, և թերթորդ կողմից առանձին զրքերի հրատարակութիւնները,—այս բոլորը նիւթական անազին գոհողութիւններ էին խելի նրանից, և նա, ծանր պարտքերի տակ ճնշուած, ստիպուած էր ծախել ոչ միայն իր սլափատանման տունը նուշում, ոչ միայն Թիֆլիսում ունեցած իր բնակարանի չքեղ կահ-կարասիքը, նոյն իսկ տոճային մեծարժէք ակնեղէնները և գորգերը, այլ և գրաւ զնել իր երեք թերթերի իրաւունքը: Բայց և այնպէս պարտքն այնքան շատ էր, որ նա հարկադրուած եղաւ ծախել կէս գնից էլ պակաս Աբօր տպարանը, որն այնուհետեւ տեղափոխուեց Բագու, իսկ Աղբիւրը, Տարագր և **ԱՌՈՒՇԵՆ**-ը կապալով տուեց Գաբրիէլ Միրզոյեանին և Ստեփան Լիսիցեանին 7 տարի պայմանաժամով: Այսպիսով իր ըստ ամենայնի կարգի գրած գործը յանձնելով իր նախկին գործակցին, Տ. Նազարեանը, իր քայքայուած առողջութիւնը վերականգնելու համար, մեկնեց արտասահման:

1892 թ. գեկտեմբեր ամսից Աղբիւր-Տարագր սկսեցին լոյս տեսնել Գ. Միրզոյեանի և Ս. Լիսիցեանի մշտական աշխատակցութեամբ և բժ. Գ. Լիսիցեանի անուանական խմբագրութեամբ: Վերջինս մահուան պատճառով

յուրիւ-օգոստոս **№№**-ին ստորագրած է խմբ.-հրատ. Տ. Նազարեան: Վաղաւառուները հէնց ակզբից Աղբիւրին տուին երկրորդական տեղ, ապագրելով շատ անպատշոյճ և վիճաբարական տգեղ պատկերներով, իսկ գլխուսոր ուշադրութիւնը դարձրին Տարագրի վրայ և այդ թերթը շուտով դարձրին ամենանեղ կուտակցական մի թերթ և անձնական հաշիւներ մաքրելու մի ասպարէզ, որով հասարակութեան մէջ մեծամեծ դժգոհութիւնների առիթ տուին: Հետեանքն այն եղաւ, որ Աղբիւրը սկսեց ցամաքել, **ԱՌՈՒՇԵՆ**-ը դադարեց աճառը, իսկ Տարագր, բացի բանակուուից, ուրիշ նիւթ չէր տալիս: Տեսնելով գործերի վատ դրութիւնը, հետեալ 1893 թ. հոկտեմբերին կապալառուները երեսի վրայ ձգեցին Աղբիւրն ու Տարագր և հեռացան, չկատարելով Տ. Նազարեանի հետ կնքած նոտարական պայմանի և ոչ մի կէտը: Այս տարուայ սեպտ. հոկտ. **№№**-ին ստորագրած է ժամ. խմբ. Վ. Սուլթանեան:

Տ. Նազարեանը, դեռ չբժշկուած, 1893 թ. գեկտ. 26-ին հասնում է Թիֆլիս իր աւերակներին տիրանալու և, չնայելով իրեն հասցրած նիւթական և բարոյական անազին զրկանքներին, իրեն յատուկ անյուսարեկ եռանդով անմիջապէս սկսում է գործը վերստին ոտի կանգնեցնել:

Գրաքննական ատեանը չէր թոյլատրում նրան բաժանորդագրութիւն բանալ 1894 թ. համար, մինչև որ Միրզոյեանի և Լիսիցեանի պակաս թողած համարները (*նոյեմբեր եւ դեկտեմբեր*) չհրատարակէ: Սակայն Տ. Նազարեանն այս արգելքի գէժ էլ չընկճուեց: Չնայելով ծննդեան և նոր տարուայ տուներին, նա մի ամսուայ ընթացքում տպագրեց միաժամանակ երեք տպարաններում Աղբիւրի **№№** 11 և 12 (*նոյեմբեր և դեկտեմբեր*) և Տարագրի **№№** 45—48 (4 *թերթ միացեալ*) և 49—50 (2

թերթ միացեալ): Այսպիսով 1893 թ. պակաս համարները լրացնելուց և բաժանորդներին ուղարկելուց յետոյ միայն Տ. Նազարեանը (փետրուարին) իրաւունք ստացաւ բաժանորդագրութիւն բանարւ 1894 թ. համար:

1894 թուի համարները կրում են կապալառուական նախորդ տարիների աւերածութեան հետքերը. տետրակները վտիտ, Բ. բաժինը չկայ, չկան և պրեմիաներ: Յիրաւի, շատ դժուար էր արմատապէս քայքայուած մեքործ իսկոյն ոտի կանգնեցնել: Իրա համար հարկաւոր էր մի ամբողջ տարի:

Նա ահա յետագայ 1895 թուականի Աղբիւրի հրատարակութիւնը նորից տեսնում ենք իր նախկին ծաղկած դրութեան մէջ: Մի բան, որ այդ թուականին աչքի է ընկնում Աղբիւրի մէջ, դա մանուկների մինիստրի պատկերներն են: Իրանք Աղբիւրի բաժանորդ-երկխոսներն են: Խմբագրութիւնն այդ պատկերները սկսեց տպագրել բաժանորդների և Աղբիւրի միջև աւելի սերտ կապ հաստատելու և երկխոսների մէջ ընթերցասիրութիւնը տարածելու նպատակով: Այս տարի մենք տեսնում ենք Աղբիւրի դիրքը մեծացրած: Վերսկսուած է նաև Բ. բաժին ծնողների և դաստիարակների համար: Շուշում մեխուած կանաք ձգտեցին այս տարուայ Աղբիւրի դեֆիցիտը լրենց վրայ առնել, սկսեցին նուիրաբերութիւններ ժողովել, բայց գործը կիսատ թողին, և ծախքը նորից ծանրացաւ խմբագրի վրայ: Մարտից մինչև յունիս Աղբիւր-Տարազը լոյս էին տեսնում, Տ. Նազարեանի բացակայութեան պատճառով, Ալեքսանդր Մովսէսեանի (Շիրվանդադէի) ժամանակաւոր խմբագրութեամբ:

Այս տարուայ պրեմիաներն էին՝ 1) Ա. Աղայեանի Բանաստեղծութիւններ, 2) Ժերենցի Քորոս Լեւոնի, 3) Ժերենցի Երկունք Թ. դարու, 4) Բերկրանք—մի գեղեցիկ խրոմօ ակվարէլ, 5) Ռաֆայէլի և Ռուբէնի խրոմօ-

Ֆոտոտիպ և օլէօգրաֆիական 6 պատկերներ, 6) Ռուսոն և Զուլիէս—թափանցիկ նկար լոյսի դէմ կախուլու, 7) Իզմիրլեան պատրիարքի պատկերը ճենապակու վրայ պատրաստուած Լոնդոնում, յատուկ յենարանով, թանգազին մի բան: Գեկտեմբերին լոյս տեսաւ մի շատ մեծադիր փառահեղ պատկերներով յայտարարութիւն 1896 թ. բաժանորդագրութեան համար:

1896 թ. փետրուարի կէսին արդէն սպառուած է Աղբիւրի № 1-ը: Մայիսին Տ. Նազարեանը գնաց Մոսկուա Կայսր Նիկողայ Ուի թագադրութեանը ներկայ լինելու, այնտեղից մեկնեց Բուդապեստ Ունկարիայի ազատութեան հազարամեակի առիթով բացուած ցուցահանդէսը դիտելու և մամուլի ներկայացուցիչների ժողովին մասնակցելու: Նրա բացակայութեան ժամանակ խմբագրի պաշտօնը վարում է մինչև օգոստոս Ա. Արասխանեանը: Հայաստանի ռեֆորմների ծրագիրը ստորագրուելու առթիւ խմբագրութիւնն այդ տարի պրեմիատուեց մի ալբոմ-ալմանախ, բաղկացած հետեւալ պատկերներից. վեց մեծ պետութիւնների վեհապետները, նրանց մինիստրները, Պոլսի ղեսպանները, հրապարակախօսներ, քաղ. գործիչներ, հայ բարձրաստիճան հոգեւորականներ, Հայաստանի տեսարաններ և այլն, և այլն—ընդամենը 101 պատկեր:

1897 թ. պրեմիաներն էին 1) Միքայէլ Նալբանդեանի մեծադիր ֆոտոգրաւիւր պատկերը, 2) Մայրիկի ննջարանում—մի չքեղ խրոմօ, 3) Ոսկէ շղթաներում կամ Հարեմի աղջիկը, 4) Պարիզի մողեր իւրաքանչիւր ամիս: Այս տարի Բ. բաժին տալիս է միայն փետրուարին:

1898 թ. պրեմիան է մի չքեղ ալբոմ Աղբիւրից չորս անգամ աւելի մեծ դիրքով, 24 գոյնգոյն բուն գեղարուեստական նկարներով: Այս պրեմիան առանձին

վաճառուում էր 5 ռ.: Այս տարի Բ. բաժինը կցուած է միայն նոյեմբերի և դեկտեմբերի ամսատետրակներին, սակայն Աղբիւր լոյս է տեսնում, խոստացուած 2—3 թերթի փոխարէն, 5 թերթից բաղկացած:

1899 թ. խմբագրութիւնը Բ. բաժինը տալիս է նորից ամեն ամիս: Պրեմիաներն են 1) *Անտիզոնա եւ Էդիպոս*, 2) *Անտիզոնա եւ Իսմենա*—երկու խրոմօօբեզգրաֆիական շքեղ պատկեր: Բացի սրանից, բաժանորդներն ընծայ ստացան Աղբիւրի մատենադարանի 7 գրքոյի, գեղանի կազմով, որոնք են՝ 1) Օրացոյց, 2) Պոռչեանց՝ Եզրիի Մկրչչեց սուներ, 3) *Շիրվանկաղէ՝ Մելանիա*, 4) Վ. Փափազեան՝ Հայ բոճ սկների վրաններում և Արծուի մանր, 5) Յովհ. Թումանեան՝ Բանաստեղծութիւններ, 6) Պոռչկին՝ Բանաստեղծութիւններ, թարգմ. Ջաւախեցու, 7) *Ղազարոս Տէր-Իրիզորեան*՝ Շէյխ Ջաւադ (քրդական կեանքից): Այդ տարի մայիսի 26-ին տօնուեց Պուշկինի ծննդեան 100-ամեակը: Այդ առթիւ խմբագրութիւնը Աղբիւրի մատենադարանի հրատարակութեամբ լոյս տեսած Պուշկինեան ժողովածու գրքից 1000 օրինակ նուիրարերից դպրոցական աշակերտներին, նմանապէս և 500 օրինակ Տարազի № 18-ից, որ ամբողջապէս նուիրուած էր Պուշկինին: Խմբագրի արտասահման գնալու պատճառով այդ տարի յուլիսից մինչև սեպտեմբեր նրա պաշտօնը կատարում էր Կ. Մարտիրոսեան: Գեկտ. 19-ի երկրաշարժից վնասուած Ախալքալաքի գաւառի բնակիչների օգտին վաճառելու համար խմբագրութիւնը նուիրեց 500 ռ. գրքեր և պատկերներ:

1900 թուին Բ. բաժինը շարունակուած է արուել ամեն ամիս: Սակայն պրեմիան՝ Հանդէս XIX դարու լոյս չէ տեսնում խմբագրի ծանր հիւանդութեան պատճառով:

1901 թ. Տ. Նազարեանը գրեթէ մահամերձ գնում

է արտասահման սանատորիա բժշկուելու, խմբագրութեան լիագորութիւնը ստանձնում է բժշկ. Բ. Նաւասարդեան, իսկ ժամանակաւոր խմբագիր (ապրիլ—սեպտեմբեր) հաստատում է բժ. Ա. Շխեան: Այս տարի հրատարակուած են յաւելուածներ՝ Իլլիւստրաիօն, Առողջապահ և փառակազմ օրացոյց: Տրւում են արտաքոյ կարգի բնծաներ՝ ձիթանկար մանկական պատկերներ: Բացի սրանից, խմբագրութիւնը 25 ռ. մրցանակ է նշանակում 20—25 տղից բաղկացած մանկական ընտիր ոտանաւոր գրողի համար: Այս տարի Բ. բաժին չկայ:

1902 թ. շարունակուած են հրատարակուել Աղբիւր-Տարազի յաւելուածները՝ Իլլիւստրաիօն, Առողջապահ և Պարզի մողաներ: Այս տարուայ պրեմիան է Չինալ բարեկեցիկան (Վրդ գարը Հայաստանում) մի մեծագիր պատկեր: Աղբիւրի միացեալ № № 5—6 (մայիս-յունիս) նուիրում է Ղ. Աղայեանին նրա 40-ամեայ գրական և մանկավարժական գործունէութեան յօբելեանի առիթով: Նոյեմբերի 10-ին վախճանուեց Աղբիւրի սկզբի տարիների սիւնը՝ Գ. Միրզոյեանը, որի յիշատակին Աղբիւրը մի սրտագրաւ յօդուած նուիրեց և սուղագրեց նրա պատկերը: Այս տարի ևս չկայ Բ. բաժինը: Խմբագրութիւնը գանգատում է, թէ վճարող բաժանորդների թիւն այնքան քիչ է, որ նրանցից ստացած զուճարը չի ծածկում նոյն իսկ խմբագրութեան բնակարանի վարձը:

Բայց և այնպէս Աղբիւրը 1903 թ. շարունակում է հրատարակուել կանոնաւորապէս, առաջուայ նման ընտիր թղթի վրայ, գեղեցիկ տպագրութեամբ և պատկերներով, սակայն այս տարի ևս չկայ Բ. բաժինը: № 4-ի հետ ու՛ղարկում է չորս պոստ-կարտեր՝ 1) Ս. Լչմիաճին, 2) Պ. Աղամեան, 3) Գ. Արծրունու մահարձանը և 4) Ս. Նազարեանց: Այս տարուայ պրեմիան—Անիի աւերակներից—ազգային մասեկադարան պատկերն արգելուեց կա-

աւարութիւնից: Ամառը խմբագիրը նորից գնալով արտասահման ստանտորիա՝ պաշտ. խմբագիր նշանակուած է նորից Կոստ. Մարտիրոսեան (ժայիս—յուլիս):

1904 թ. ամենատաժան տարին էր ռուսահայոց համար. գալիցիներն ռէժիմի խտուածիւններն իրենց գազաթնակէտին էին հասել, խլելով մեր ազգային գոյքերը և խեղդելով ամեն մի կենդանի արտայայտութիւն կեանքի և մամուլի մէջ: Ինչպէս ազգային ամեն մի հիմնարկութիւն, այնպէս և մամուլն օրհասի մէջ էր: Ահա այդ տարի Տարազը և նրա հետ Աղբիւրը փակուեցին 4 ամիս ժամանակով յունիսի 6-ից սկսած: Հոկտեմբերի 6-ից նոբոգուեց Աղբիւր-Տարազի հրատարակութիւնը: Կազարման ամիսների փոխարէն խմբագրութիւնը միմիայն Աղբիւր ստացող բաժանորդներին ռզարկեց Տարազ հոկտեմբերին և նոյեմբերին, իսկ միևնոյն հասցեով Աղբիւր և Տարազ ստացողներին—3 ռ. գրքեր, պատկերներ և սլոժմներ: Քացի գրանից՝ բաժանորդները իբրև պրեմիա ստացան *Մար-Դրովի*՝ Նեղ օրերից մեկը պատմուածքը գեղանի կազմի մէջ:

1905 թ. վերականգնուելով Կովկասի փոխարքայութիւնը և փոխարքայ նշանակուելով կոմս Վարանցով-Կաչկովը, Կովկասի բոլոր ժողովուրդներն ընդհանրապէս և հայերը մասնատրապէս ազատ շունչ առան: Վերադարձուեցին մեր ազգային-հասարակական հիմնարկութիւնների լայնածիրաւունքները: Ի միջի այլոց Աղբիւրն ևս վերստացաւ իր նախկին ծրագրի իրաւունքը, որ ստացուած էր նախկին փոխարքայ Մ. Ի. Միխայիլ Նիկոլայեւիչի օրով 1882 թ. և որը հետզհետէ կրճատուելով Կալիցիների օրով այն տեղն էր հասել, որ 1902 թուից սկսած հրաջջ պիտի համարուի թէ Աղբիւրի և թէ Տարազի հրատարակութիւնը: Սակայն վրայ են հասնում ազատագրական օրերը, բանուորական անվերջ գործադուլները, «մամուլի

ազատութեան» վակխանալիան, երբ ամեն ինչ զլխի վրայ է գրուում: Այդ տարի Աղբիւրը լոյս է տեսնում միայն 6 № (յուլեուար—յուլիս):

1906 թուին, երբ «մամուլի ազատութեան» վակխանալիան իր գազաթնակէտին էր հասել, երբ թերթերի տէրն ու տնօրէնը տպարանական բանուորներն էին, Աղբիւրը լոյս է տեսնում միմիայն 3 № (յուլեուար, փետրուար և հոկտեմբեր): Վերջին համարում մենք հանդիպում ենք այսպիսի մի ծանօթութեան խմբագրութեան կողմից. «Ներկայ №-ը նիւթապէս մեզ այնքան արժէ, որքան, օրինակ, ամէր անցեալ տարի հինգ № № Աղբիւրի շարուածքը»: Եւ սակայն Աղբիւրի ամբողջ 25 տարուայ հատորների մէջ չէք գտնիլ զէթ մի համար, որ տպուած լինէր այնքան խայտառակ կերպով, որքան այդքան թանկ նստած համարը: Մի կողմից բաժանորդներ չկային, միւս կողմից տպարանական բանուորներն այնպիսի ծանր պայմաններ էին առաջադրում, որ խմբագրի առաջ ցցուել էր 24 տարուայ իր պաշտած և փայտուած գործը փակելու հրամայական պահանջը: Դեկտ. 29-ին, Աղբիւրի 25 ամեակի նախօրեակին, խրմբագրատանը գումարուեց Սենեքերիմ Արծրունու նախագահութեամբ մեր գրականագէտների և լրագրողների մի բազմամարդ ժողով, որի առաջ Տ. Նազարեանը պարզեց իր գործերի դրութիւնը: Ժողովը խնդրեց Տ. Նազարեանին շարունակել իր գործը եւ գտնելով Աղբիւրը իբրև անհրաժեշտ եւ օգտակար մի օրգան՝ տարածել այն հայութեան բոլոր խաւերում: Տ. Նազարեանը շարունակեց Աղբիւրը, սակայն ժողովի որոշումը լսի որոշում էլ մնաց:

1907 թ. Աղբիւրը լոյս տեսաւ ամենայն կանոնաւորութեամբ, նոյն իսկ դիրքը մեծացրած, իսկ յուլիսին հրատարակուեց Բ. բաժինը Իսուխարակ անունով, իբրև

առանձին գրքով: Բաժանորդներին ընծայ ուղարկուեցին *Չընաղ բարեկենդան*, Հայոց Հայրիկը Սեականում գեղեցիկ մեծագիր պատկերները և երկու գոյնաւոր նկար Գող Մուսաֆա և Բարեկամներ: Այս տարուայ գեղատեմբերի №-ով Աղբիւրը բոլորեց իր բազմաբեզուն 25-ամեակը:

Այգ առիթով 1908 թ. յունուարի 25-ին Աղբիւրի խմբագրութեան կից գտնուած Գրական-Գեղագիտական Սալոնում Տ. Նազարեանը սարքել էր գրական-երաժշտական մի երեկոյթ իր հանգուցեալ աշխատակիցների յիշատակը յաւերժացնելու և ողջամբ ասլոյ աշխատակիցներին իր յարգանքը մատուցանելու համար: Երեկոյթին մասնակցում էին հայ, ռուս, վրացի, հրէայ, իտալացի արտիստներ և արտիստուհիներ: Ներկայ էին Աղբիւրի նախկին և այժմեան աշխատակիցները, տպարանական աշխատատուրները, հայ, ռուս և վրացի մամուլի ներկայացուցիչները, զրականագէտներ և պատուաւոր հիւրեր: Ահա այս երեկոյթից յետոյ էր, որ ժողովականների մէջ միտք յղացաւ պատշաճաւոր կերպով տօնելու Աղբիւրի 25-ամեայ յօբելեանը և այդ գործի կազմակերպումը յանձնարարուեց բժշկ. Բ. Նաւատարգեանին:

Տեղական մամուլը համակրական յօդուածներ նուրբեց այդ առիթով Աղբիւրին: Ստորև առաջ ենք բերում Ա. Մ. Եղեկեանի գեղեցիկ յօդուածը, որ տպագրուած է Մշակի № 28 ի մէջ:

ՋԳԱՑՄՈՒՆՔԸ ՊՍԱԿԵՑԷՔ ԳՈՐԾՈՎ

Մի քախձաբե՛ Բասնեհինգամեակ.—Նրա ցայտահանգէտը.—«Աղբիւր» ամսագրի յունուարի 25-ի առաջին համարը.—Կոչ:

Աչքիս տակ ունեմ Աղբիւրի քսանհինգամեակի այս 1908 թուի յունուարի 25-ի № 1-ը, իսկ աչքիս մէջ խորին յուզմունքի շիթը *):

Միննոյն նշանակն**) է մուտքի վրայ: Լայն երկփեղկուած պլուստոնական երկու ժայռերի պատառուածրից ներս, հանդէպդ, լեռը՝ կոնաձև աւարտով, ձախումդ, ժայռահարթի վրայ, լեռնակունների տնակներ՝ իբր արծուային ապարանքներ, և սրանց վրայ աւելի բարձրից հովանի ծառախումբը. խորքում անդունդը, ուր, գահավէժ, լիղելով ժայռն, իջնում է լեռնային վտակը, անցնում է ժայռերի մուտքի վրայ դրսից կապուած կամուրջի տակով, սփռուում է ցան և ցիր և ապա... երևակայութեանդ թող՝ հետևել նրան իր թաւալվոր ընթացքում:

*) Յունուարի 25-ին բոլորեց Աղբիւրի 25 ամեակը. մի ցայտահանգէտով նշանաւորուեց այդ օրը մի քանի սասնեակ հրաւիրեալների շրջանում:

**) Աղբիւրի կողմ վրայ նրա ցուցանակ պատկերն է:

Այդ է Աղբիւրի խորհրդաւոր նշանակը. և այդ էր քսանհինգ ձիգ տարիներ — եթէ երբեմն զուարթութեան՝ բայց աւելի շատ չարքաշութեան տարիներ — նրա ճակատի գիրը:

Վտակը ծնուում է ժայռի կողքից, աղբիւրանում է, դարահոս իջնում, անդնդում փրփրում, ապա ծայր առնում, ծիծաղ ծաւալ ժպիտով. արծաթ-արծաթ կոհակ ներով՝ քարից քար, քարից քար ոտտոտելով, կարկաչելով, ցայտելով, միշտ առաջ, միշտ առաջ. և երթալով-լցուելով քոյր վտակների գրկախառնունքից՝ նա գետանում է և շառաչմունքով թաւալում:

Իսկ այնուհետև՝

Իսկ այնուհետև... Լսեցէր:

«Երբեմն լեռնային գագաթից պոկուում է, ցած է գլորում մի ահագին քարաժայռ: Նա կտրում է գետի ճանապարհը: Զրբերի ընթացքը կանգ է առնում: Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է, ուռչում է և, հետզհետէ աճելով, հաւաքում է իր ոյժերը: Մի գնդկ-գնդկ ևս... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, յետ մղուեց. կատաղի ալիքները մի թեթև և տաշեղի նման տանում են նրան, տանում են և, դարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, փռչրում են: Գետը դարձեալ ընդունում է իր բնական հոսանքը» *):

Հասկանում էր այժմ Աղբիւրի նշանակութիւնը, նրա խորհուրդը: Վտակը նախ, և ապա գետ Թարթարը:

Մի ամբողջ ընթացք՝ օրօրոցից դէպի հրաբուխ կեանքը: Դուր կը կարդաք վտակի և Թարթարի պատկերների վրայ կեանքի մանկութիւնը և խրոխտ հասակը:

*) Բաֆֆի, Աղբիւր, № 1, 1908

Քսանհինգ տարի այդ ճանապարհի վրայ ճգնեց Տիգրան Նազարեանի Աղբիւրը. իսկ այսօր:

Կողի առաջին երեսի վրայ, ձախից, կարգում ևս համարի բովանդակութիւնը: Կոչում ևս անուն-անուն մի շարք հանգուցեալ տշխատակիցներ, որոնց պատկերները պիտի տեսնէք համարի ներսի էջերում: Ապա բովանդակութեան նիւթերի վերնագրերը՝ խաշանչուած հեղինակների անուններով: Միայն մեռելներն են խօսում. ոչ մի կենդանի չունի: Ո՛, տխուր զգացմունք, բայց և գո՛յար վերջիչողութիւն: Նրանք զարթի անուշանուազ և խորագրիչ մեղեդին հնչեցնողներ են, այստեղ մեղմ, այնտեղ խրոխտաձայն: Նրանք այժմ խորճենկ քնած են գերեզմանների բունը:

Աչից՝ կարգում ևս. արուեստի դահլիճում, ցայգահանդէս. յիշատակ անցածներին, պատիւ դեռ շնչող աշխատակիցներին, որոնք սահած քսանհինգ տանինքրում վաստակել են Աղբիւրի շուրջը: «Յաւե՛րժ յիշուս.սկ եւ յարգանք մեր աշխատակիցներին» — լուում է նորից խըմբազրի ձայնը երկրորդ երեսի վրայ, և հետևում է արձանագրական շղթան բոլոր վաստակաւոր անունների, լցնելով լուրթ մեծաթերթի հրեւր երկիջեան սիւնակներով:

Յիշատակն արդարոց օրհնութեանք եղիցի:

Եւ ցայգահանդէսի ծրագիրը բացուում է քահանայի «Հոգւոց»-ովը, որին յաջորդում է եկմալեանի «Ճար մեր»-ի եղանակումը. և ապա տողանով հետզհետէ լցւում է դահլիճը արտասանութեամբ և գործիական ու ձայնական երաժշտութեամբ. փոխ առ փոխ: Ներդաշնակութեան ալիքների միջով, ուր եղանակումն, նուազ և զգացումն հիւսուած են միասին, ցայգահանդէսը երկարում է դէպի կէս գիշեր: Հուսկ լուում են լարերը, իսկ սրտերը լի են լրենց զեղլու քսանհինգ տարիների վաստակաւորի և

արուեստին պաշտամունք մատուցողի առաջ, իբր երախտագէտ շնորհակալութիւն նրա այնքան և այնքան արնութեանը: «Նազարեան, Նազարեան» — կանչում են հանդիսականները:

«Ո՛ր, դուք յարգեցիք յիշատակն անցեալ վաստակաւորներին և ցուցիք պատիւը միւսներին, որոնք դեռ շինչում են օդը. իմ ցայգահանդէսը այդտեղ է առնում վերջ: Ոչ ձերք ինձ, այլ իմ շնորհակալիքը ձեզ: Ոչինչ աւելի: Ոչինչ աւելի»:

Եւ Տիրքան Նազարեան անյալթելի կերպով յամառում է պնդել՝ — ոչինչ աւելի: Նա մերժում է մտնել այդ բոլորին հանդիսաօրհանը:

Ըրջում եմ թերթ թերթի ետևից ամսագիրը. անցեալ հոգիներ, մարած ճրագներ, ահա ետե՛ք ետև անցնում են աչքիս տակով Մուշեղ Մամիկոնեան. Սոլովիև Նեսմիլով՝ պատուական ուսուցիչ, որ մանկութեան վրայ էր դրել յոյսը պապայ լաւ մարդն ունենալու համար. նկարիչ Ստ. Ներսէսեան. Նատալիա Տէր-Մարկոսեան. Մակար Եկմալեան. ահա Գրիստափոր Միրայէլեան՝ նուիրական զգացմունքի հերոս մարդը. սո՛ւ, սա Բաֆֆին է, Բաֆֆին. տե՛ղ տուէք, ոգիներ. Պերճ Պոօշ, աւա՛ղ. սա իր յօդուածով ներս է բերում իր հետ Աղբիւրի մէջ Խաչատուր Աբովեանի անմեռանելի գէմբը. Սիմէօն Հախումեան. իսկ դու, աւա՛ղ, գէպի վայր հակուած մի հարուստ սողաթի պատկերով ես յիշատակում, գողարկի Քրիստափոր Թադէսեան, վաղ խորտակուած մակոյկ. Գաբրիէլ Միրզոյեան՝ գաղափարի կուռի մարդը, մանկական հոգու կազմակերպութիւնից գնելով իր գործը: Ամմասն Պետրոս Ագամեան. բեմից հայի և մանաւանդ հայ բարձրագոյն տիկնոջ սիրտը գէպի ազգութիւն շուռ տուողը. սա — այրական հասակը իր արուեստի կախարգիչ գաւազանով նուաճողը — իր խօսքի մեղրովը Աղբիւրի մանուկներին Զատիկ կար-

միր ձուովն է գրաւում, և լինչպէս. նա ուզում է սուրբ կարմիր արիւնի շնորհը ցօղած տեսնել նրանց վրայ և վարդի կարմրութիւնը նկարուած նրանց դէմքին: Ողբալի Չահլամեան, ահաւասիկ և դու. դու դեռ 91 թուին Աղբիւրի գանգատն էիր եղերգում մարգարէութեամբ, և նրա գալիք լացը լալիս, արտասուքդ խտալական մի վտակից բերելով. —

Ես մէկ թելի շափ ջուր էի և մաքուր բարակ կոհակով
Փայտերից իջնում էի.

Ես հանգարտ և ուղիղ առանց խանգարելու ոչ ոքի
Անվրդով հոսում էի:

Բայց մէկ անգամ հրապուրիչ ջրովս վայրկենաբար
Օտարի ուշքը գրաւեցի:

Քնքշաբար գրկեց նա և խոնարհուելով գէպի ինձ՝
Ես շրթունքները թրջեցի:

Բայց յետոյ... բաժանուեցանք. նա մնաց լեռների ետևում,
Իսկ ես լալիս եմ անդադրում *):

Նա մնաց լեռների ետևում...

Այդպէս անցան ուրուականներն աչքիս տակով. մի քանիսը լուռ, միւսներն իրենց քնարից մի լար թրթռեցնելով, կամ յուշատետրից մի էջ բանալով:

Ըրջում եմ համարը իր բոլորովին վերջին երեսի վրայ.

«Քսանեհինգամեակ հիասթափման» — արձանագրել է այստեղ խմբագիրը. և նա իր ամբողջ գրագարանն ու պատկերները առ իս է նրան՝ ով կը լուծէ Աղբիւրի այդ հանելուկը:

Սրտի մորմոքը, կսկիծը — իր՝ արդէն ստուերների շարքն անցնելու դռնում կանգնած գործի հանդէպ, այնքան երկար տարիներ, մի ամբողջ քառօրդ դար, գրկած ու փայփայած, իբրև աչքի բիրը պահպանած՝ սիրած

*) Աղբիւր № 1, 1908 թ. յունուաբի 25.

գործի հանդէպ—սրտի մորմորք, կսկիծը, ասում եմ, խո-
ժոռեցրել մուսյլ են դարձրել խմբագրին: Նա այժմ, իբրև
վհուկ, կոչում է ցուրտը փշոզ մրրիկ քամին պապանձաւ-
ներից: Ահա երկու մատաղատի քոյրեր, ընկած սասակա-
կոծ հողմի բերանը. երկուսն էլ բոկոտն: Պուրակի մէջ՝
աղբիւրի վրայ կամ վտակի ափին են եղել նրանք խաղ
ու խնձիղ անելու և շորուկ ժողովելու: Եւ ահա այդտեղ
եղանակի յանկարծական փոփոխութիւնը մրրիկ բերանն
է սուել նրանց: Անդրանիկը մի գիրկ ցախ կռնատակն ա-
ռած և աջովը իր փոքրիկի ձեռքից բռնած, երկուսն էլ
երեսներն իրանց կուրծքին և ճակատները լկող քամուն
առած՝ գնում են հողմակոծ:

Սառնամանիք եւ իր *) սիւե լիներ—այդպէս է նը-
շանակագրել այդ պատկերը Աղբիւրի խմբագրի, անշուշտ
սրտի մուխն աչքերում ու մրմուռն ունեցնելու:

Սրտայս՛յդ այլաբանութիւն:

Այդ է վերջին պատկերն և այդ էլ վերջին խօսքը:
Եւ այդպիսի վախճանով բոլորած է Աղբիւրը իր քսանե-
հինգամեակը:

Ինքդ ես հանել հանելուկը, ո՛վ տխրամած խմբա-
գիր: Գեղ ուրեմն կ' գրքերդ և՛ պատկերներդ: Եւ իմն
որ քար չի մնալ մարդու սիրտը՝ երբ բանաստեղծը իր
աւիւնով կը հպի նրան. նա կը յուզուի, բարեկամ, նա կը
յուզուի:

Ո՛վ դուք, որ ամեն հանդիսադրութեան ժամանակ
յորդ զգացմունքով հիւսում էք ձեր մաղթանքը աստախըմ-
բուող գործի շուրջը, ձեր մտքի առաջ պահեցէք յունուարի
25-ի խորհրդաւոր ցայգահանդէսը—օրհներգ արդէն յա-
ւերժութեան գիրկն անցած ոգիներին և պատուադրութիւն

*) Ի՛ր, իմանալ Աղբիւրը, կամ խմբագիրն Աղբիւրի դէմքի
տակ:

նրանց, որոնք դեռ շունչ ունեն և մի նոր արիական մը-
ղումով կարող են Աղբիւրի վերստին կարկաշը լսելի անել
տալ մանկութեան յուսաժպիտ մարգաստանի մէջ—և ար-
ձակեցէք, իւրաքանչիւրդ իր տեղում, ձեր յորդորական
ձայնը քաղաքներին և գիւղերին՝ օժանդակ կանգնել Աղ-
բիւրի վերահասմանը:

Ես շրթունքները թրջեցի:

Բայց յետոյ... բաժանուեցանք. նա մնաց լեռների ետևում,

Իսկ ես լալիս եմ անդադրում:

Տխուր է այդ վարագոյրը, շատ տխուր: Յետ քա-
ղեցէք, յետ քաղեցէք, ո՛վ արիական հոգիներ:

Ա. Մ. ԵՋԵԿԵԱՆ

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.


Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



4177

Ա - 48

ԳԻՆՆ Է 20 Կ.

Յանձնաժողովիս հետ յարաբերութիւն ունենալու
համար պէտք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФЛИСЬ,
Д-ру мед. Баграту Абраамовичу Навасардіану, дирек-
тору первой ч. д'чебницы.

4177

u . 48